

## ՁԵՐԲԱԿԱԼՈՒԿԾ Է ՅԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՃԱՆՉՑՈՂԹՈՒՐՔ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ՌԱՃՐՓ ԶԱՐԱՔՕՂՈՒ

Հայոց Ցեղասպանության մասին շարք մը գիրքեր հրատարակած թրքական «Պէյճէ» հրատարակչության հիմնադիր Ռաճրֆ Զարաֆոյլու անցեալ շաբաթ ձերբակալուած է Պոլսոյ մէջ ու այժմ կը գտնուի կալանքի տակ:

Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցած թուրք մտաւորականը կը մեղադրուի Ապտուլա Օձալանի ղեկավարած Քրտական Աշխատակրական Կուսակցութեան հետ առնչութիւն ունենալու մէջ:

Պոլսոյ մէջ լոյս տեսնող՝ Հայկական «Ակօս» թերթի խմբագիր Սարգիս Սերոբեան «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է, - «Զարաֆոյլու անցեալ շաբաթ քուրդ չէր, սակայն այդ կուսակցութեան համակիրն էր»:

Թրքական դատախազութեան պնդումներուն համաձայն, Զարաֆոյլու կապեր ունեցած է «Քրդական Հանրութիւններու Միութիւն» անուան տակ գործող կառույցին հետ: Թրքական յատուկ ծառայութիւնները կը պնդեն, որ այդ կազմակերպութիւնը իսկութեան մէջ կը հանդիսանայ Քրտական Աշխատակրական Կուսակցութեան մէկ թեւը, որ իր գործունէութիւնը գլխաւորաբար կը ծառայէ երկրի մեծ քաղաքներուն մէջ, յատկապէս՝ Պոլսոյ մէջ:

Սօս ամիս մը առաջ նոյն կառույցին անդամակցելու մեղադրանքով ձերբակալուած էր նաև Զարաֆոյլուի որդին:

«Ակօսի» խմբագրի համաձայն, Զարաֆոյլու կտրականապէս կը հերքէ իրեն ներկայացուող մեղադրանքները:

Թուրք իրաւապաշտպաններ ու լրագրողական կազմակերպութիւններ յայտարարեցին, որ Զարաֆոյլուի ձերբակալութիւնը քա-



Ձերբակալուած թուրք մտաւորական Ռաճրֆ Զարաֆոյլու

ղաքական դրդապատճառներ ունի: Հրատարակչի ձերբակալութիւնը դատաւարտող յայտարարութիւններ տարածեցին նաև Մարդու իրաւունքներու թրքական Ընկերակցութիւնը, Հրատարակչիներու Միութիւնը եւ Գործող Լրագրողներու Ընկերակցութիւնը:

«Թրքական ժողովրդավարութեան համար կրնայ շատ վատ հետեւանքներ ունենալ այս իրողութիւնը, երբ լրագրողները, սինակագիրներն ու հրատարակչները կը յայտնուին ճաղերու ետեւ՝ զանգուածային ձերբակալութիւններու հետեւանքով», - ըսուած է թուրք Հրատարակչիներու Միութեան տարածած յայտարարութեան մէջ:

Սարգիս Սերոբեանի համա-

Շաբ.ը էջ 4

## ՀՐԱԺԱՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՇՏՕՆԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՎԵՐՆԱԽԱՒԵՆՆԵՐՍ

Վերջին օրերուն Հայաստանի իշխանական վերնախաւէն ներս տեղի կ'ունենան բաւականին ուշադրաւ իրադարձութիւններ՝ շարք մը հրաժարականներու եւ պաշտօնանկութիւններու միջոցաւ: Քաղաքական շրջանակներու կարծիքով, տեղի ունեցող փոփոխութիւնները կապուած են յառաջիկայ տարի տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութիւններուն հետ, որու ընթացքին Սերժ Սարգսեանի կողմնակիցները մտավարութիւն ունին որ, կրնայ աշխուժանալ նախկին բռնապետ Ռոբերդ Քոչարեանը:

Ուրբաթ, Հոկտեմբեր 28-ին անակնկալ հրաժարական ներկայացուց Երեւանի քաղաքապետ Կարէն Կարապետեան, յայտարարելով թէ իրեն պաշտօն առաջարկուած է ռուսաստանեան խոշորագոյն ընկերութիւններէն մէկուն կողմէ: Իշխող Հանրապետական կուսակցութեան որոշումով, Կարապետեանն անմիջապէս փոխարինուեց ողբացեալ վարչապետ Անդրանիկ Մարգարեանին որդին՝ Տարօն Մարգարեան:

Երկուշաբթի, Հոկտեմբեր 31-ին պաշտօնանկ եղաւ Հայաստանի

ուստիկանապետ Ալիկ Սարգսեան, որ ըագրողներուն խոստովանեցաւ թէ, անակնկալի եկած է եւ անտեղեակ՝ թէ ի՞նչ են պատճառները, պաշտօնէն իր հեռացման:

Մի քանի ժամ ետք, նոր ոստիկանապետ նշանակուեցաւ Վլադիմիր Գասպարեան, որ մինչ այդ կը վարէր պաշտպանութեան փոխ նախարարի պաշտօնը:

Նոյն օրը երեկոյան յայտարարուեցաւ Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեանի հրաժարականի լուրը: Աբրահամեան լրագրողներուն յայտնեց, որ նախագահ Սերժ Սարգսեան իրեն առաջարկած է գլխաւորել Հանրապետական կուսակցութեան նախընտրական շտապը եւ ինք ընդունած է այդ առաջարկը ու այդ պատճառաւ որոշած է հրաժարիլ խորհրդարանի նախագահի պաշտօնէն:

Հայաստանեան մամուլի համաձայն, կը սպասուի նաև փոխվարչապետ Արմէն Գէորգեանի հրաժարականը: Ան կը նկատուի կառավարութեան ներս Ռոբերդ Քոչարեանի ամենէն վստահելի

Շաբ.ը էջ 5


## ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՄՏ ՀԱՅՐ 18 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ ՆՈՒԻՐԱԾ Է ՀԱՅ ԹԵՆԻՍԻՍՏԻ ԴՊՐՈՑԻՆ



Աշխարհի ամենահարուստ հայր Քրք Բըրքորեան

Աշխարհի ամենահարուստ հայր, ամերիկահայ միլիարատէր Քրք Բըրքորեան 18 միլիոն տոլար նուիրած է Լաս Վեկասի մէջ գտնուող հայ աշխարհահռչակ թենիսիստ Անտրէ Աղասիի հիմնած նախապատրաստական ակադեմիային: Այս խոշորագոյն նուիրատուութիւնն էր Աղասիի Կրթութեան հիմնադրամի 16-ամեայ պատմութեան մէջ, կը հաղորդէ «Education Week»- թերթը: Այս տարիներու ընթացքին Աղասիի բարեգործական հիմնադրամը 150 միլիոն տոլարի նուիրատուութիւն ստացած է:

Աղասին, որ կը հաւատայ, թէ ոչինչ չի կրնար այնպէս ազդել



Աշխարհահռչակ թենիսիստ Անտրէ Աղասի

մարդու յետագայ ճակատագրի վրայ, ինչպէս կրթութիւնը, իր բարեգործական դարձը հիմնած է Լաս Վեկասի ամենազվերահասկող թաղամասին մէջ, ուր երեխաներու կրթութիւնը ամենէն շատ վտանգուած է:

Անտրէ Աղասի ծնած է Լաս Վեկասի մէջ: Ան երկար տարիներ եղած է վարկանիշով աշխարհի թիւ մէկ մասնագէտ թենիսիստը:

Անտրէի հայրը՝ Իրանահայ էմանուէլ Աղասի, կ'աշխատէր Քրքորեանի քաղնոններէն մէկուն մէջ, ուր ընկերացած է Քրք Բըրքորեանի հետ, որ յետագային դարձած է Անտրէ Աղասիի կնքահայրը:

## «ՄԱՍԻՍ»Ի ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ «ԱՅՖՈՆ» ԵՒ «ԱՆՏՐՈՅՏ» ՀԵՌԱՄՈՍՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

«Մասիս» շաբաթաթերթի կից գործող «Մասիս Փոսթ» հայկական լուրերու ինթըրնէթային կայքէջի բովանդակութիւնը այժմ հասանելի դարձաւ նաև բջիջային սրամիտ հեռախօսներու միջոցաւ:

Արդարեւ, պատրաստ է «Այֆոն» եւ «Անտրոյտ» բջիջային հեռախօսներու համար յատուկ ծրագիր, որ ընդունուեցաւ երկու ընկերութիւններուն կողմէ եւ այժմ մատչելի է բոլորի համար:

Հեռախօսային ծրագրի նախաձեռնողը հանդիսացաւ 15-ամեայ Նարեկ Խոտանեան, որ «Կայծ» Երիտասարդական Միութեան անդամներուն հետ միասին իրագործեց այս նոր ծրագիրը:

1994 թուականին «Մասիս» շաբաթաթերթը դարձաւ ինթըրնէթի վրայ հայերէն տառերով առաջին լրատուական կայքէջը: Այս նոր ծրագրի իրագործումով «Մասիս» կը դառնայ առաջիններէն մէկը, որ հայկական թարմ լուրերը շուրջօրեայ կերպով հասանելի կը դարձնէ սրամիտ հեռախօսներ օգտագործողներուն:



Շաբ.ը էջ 4

# ՔՈՉԱՐԵԱՆԱԿԱՆ «ՃԱԿԱՏԸ» ՉԻ՞ ԿԱՅԱՆՈՒՄ

## ՅԱԿՈՐԲԱԴԱԼԵԱՆ

Գազիկ Ծառուկեանի նոր հարցազրույցը, որտեղ նա փաստորէն վերհաստատում է հաւատարմութիւնը Փետրուարի 17-ի յուշագրով կայացրած պայմանաւորութեան թերեւե՛ր հանդէպ, հարց է առաջ բերում, թէ արդեօք Ծառուկեանի այդ մեկնաբանութիւնը նշանակում է, որ Քոչարեանը հրաժարուած է խորհրդարանի ընտրութեանը ներգրաւուելու մտադրութիւնից:

Իհարկէ, Քոչարեանն ինքը այդպիսի մտադրութիւն հրապարակաւ չի յայտարարել: Նրա ներգրաւուածութեան մասին ենթադրութիւն էր արել նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանը, իսկ դրանից յետոյ էլ Ռոբերտ Քոչարեանը հարցազրույց էր տուել եւ նշել իր վերադարձի երեք կէտ՝ տնտեսական անմիջապէս վիճակ, հանրային պահանջարկ եւ իրավիճակը արմատապէս փոխելու կարողութիւն:

Քոչարեանի գուշակութիւնը հասկանալի էր: Նա երբեք չի յայտարարել իր վերադարձի մասին, եթէ վստահ չլինի, որ դրան խանգարող ոչինչ չկայ, եւ վերադարձը կիսատ չի մնայ: Ներկայիս պայմանները, մեղմ ասած, լաւատեսութիւն չեն ներշնչում այդ առումով, բայց դա չի նշանակում, որ Քոչարեանը ձեռնպահ էր մնալու խորհրդարանի առաջիկայ ընտրութեանն ակտիւ ներգրաւուածութիւն ունենալուց, թէկուզ անուղղակիօրէն:

Բանն այն է, որ Հայաստանի իշխանական համակարգի կառուցուածքը այնպիսին է, որ կամ պէտք է այդ համակարգը քանդու ապա ասած յեղափոխական ճանապարհով, կամ պէտք է համակարգ մտնես ներսից: Դժուար է պատկերացնել Քոչարեանին յեղափոխական ճանապարհի վրայ: Իսկ ներսից մտնելու համար, նա պէտք է երբեք չկորցնի իր դիրքերը համակարգում: Եւ հենց միայն դա արդէն իսկ բաւական է, որ Քոչարեանը հետաքրքրուած լինէր խորհրդարանի առաջիկայ ընտրութեամբ եւ ձգտէր դրա միջոցով հնարաւորինս ընդլայնել իր ազդեցութիւնն իշխանական համակարգում, վերադարձի շանսեր պահելու համար:

Այդ իմաստով թերեւս անկասկած է, որ չնայած ուղղակի եւ բացառապէս յայտարարութեան բացակայութեանը, Քոչարեանը լինելու էր խորհրդարանի ընտրութեան հիմնական սուբիեկտներից մէկը: Իսկ Գազիկ Ծառուկեանին, թէ իշխանական շատ գործիչներ եւ շրջանակներ, թէ հասարակական-քաղաքական այլ շրջանակներ, համարում կամ ընկալում են որպէս այդ սուբիեկտի գլխաւոր գործընկերներից մէկը, ինչը հաստատուեց յատկապէս Ծառուկեանի այն յայտարարութեամբ, որ Քոչարեանն ունի վերադառնալու քաղաքական եւ բարոյական իրաւունք:

Ահա այդ տեսանկիւնից, հարց է առաջանում, թէ արդեօք կոալիցիոն յուշագրին Գազիկ Ծա-

ռուկեանի հաւատարմութիւնը նշանակում է, որ Քոչարեանը դադարեցրել է իր քաղաքական ծրագրերը, ինչից ելնելով էլ Ծառուկեանը որոշել է չհակադրուել Սերժ Սարգսեանի հետ, քանի որ առանց Քոչարեանի աջակցութեան, այդ հակադրութիւնն իր համար կարող էր բաւական ծանր աւարտ ունենալ:

Բայց, չէր կարող արդեօք Ծառուկեանն իր քաղաքական գործունէութիւնը իրականացնէր Քոչարեանի ծրագրերից անկախ: Այսինքն, կարող էր արդեօք լինել այնպէս, որ ոչ թէ Ծառուկեանը յոյս դնէր Քոչարեանի վրայ, այլ Քոչարեանը ակնկալէր Ծառուկեանի աջակցութիւնն իր վերադարձի հարցում:

Միգուցէ Ծառուկեանի յայտարարութիւնը ոչ թէ Քոչարեանի արգելակման հետեւանք է, այլ Քոչարեանի արգելակումը կարող է լինել կոալիցիոն յուշագրի վերահաստատելու մասին Ծառուկեանի յայտարարութեան հետեւանք: Այսինքն, ոչ թէ Ծառուկեանը ընդունեց Սերժ Սարգսեանի առաջնայնութիւնն այն պատճառով, որ Քոչարեանը որոշեց ընդհատել իր ակտիւնաւոր գործընթացը, այլ Քոչարեանն այդ գործընթացը ստիպուած կը լինի ընդհատել, որովհետեւ Ծառուկեանն ընտրեց Սերժ Սարգսեանի առաջնայնութիւնը:

Ի դէպ, այդ առումով յատկանշական է Դաշնակցութեան արձագանքը, որը նոյնպէս ընկալուած է որպէս Ռոբերտ Քոչարեանի անուղղակի, բայց հնարաւոր քաղաքական յենարան: Դաշնակցութիւնն իր դժգոհութիւնն է յայտնում կոալիցիոն յուշագրի կապակցութեամբ, սակայն, թէ հանրութիւնը դա չի ընդունում: Հետաքրքրական է, երբ Դաշնակցութիւնն ինքն էր կոալիցիա կազմում, հանրութիւնն ընդունում էր, երբ կազմում են առանց իրեն, պարզուած է, որ հանրութիւնը չի ընդունում:

Իրականում այստեղ նկատուած է հրաւիրութեան տարր, որ ՀՅԴ-ն ապրում է ԲՀԿ-ից: Ըստ երեւոյթին, Դաշնակցութիւնն ակնկալում էր, որ ԲՀԿ-ն մինչեւ վերջ կը շարունակի առճակատումը ՀՀԿ հետ եւ հնարաւոր կը լինի ձեւաւորել այսպէս ասած «Քոչարեանի վերադարձի» միասնական «ճակատ»: Դրանով է պայտ կարող էր բարձրանալ Դաշնակցութեան քաղաքական կշիռը: Սակայն ԲՀԿ-ն խափանում է այդ ծրագրերը, Քոչարեանին էլ զրկում իր ծրագրերն առաջ տանելու հեռանկարից, այդպիսով նաեւ ըստ էութեան հարուածելով ՀՅԴ ներքաղաքական սուբիեկտութեան հեռանկարին, քանի որ առանց ԲՀԿ-ի, այսպէս ասած «քոչարեանական ճակատը» կը լինէր չափազանց անպաշտպան եւ անկենսունակ: Իսկ եթէ ՀՅԴ-ն «քոչարեանական ճակատում» չէ, ապա թերեւս յայտնուելու է բաւական մարդիկ մի իրավիճակում, փորձելով լուծել ընդամէնը 5 տոկոսը յաղթահարելու ինդիքը:

«ԼՐԱԳԻՐ»

# ԻՆՉՊԵՍ ԿՈՐՈՇՈՒԻ 500.000 ՁԱՅՆԻ ԸԱՐՑԸ

## ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Հայաստանը իւրայատուկ երկիր է: Այստեղ կարող են նստեցնել հանրահաւաքին մասնակցելու համար եւ ուշադրութիւն չդարձնել հակասամանադրական գործունէութեան լրջագոյն մեղադրանքներին: Արդեօք Հանրապետական կուսակցութիւնը կը պատասխանի Լեւոն Տէր-Պետրոսեանի մեղադրանքին՝ վերջին ընտրութիւնների ժամանակ կէս միլիոն «մահացած հոգիների» օգտագործման վերաբերեալ:

ՀԱԿ ՎԵՐՉԻՆ ՀԱՆՐԱՀԱԼԱՔՈՒՄ

Լեւոն Տէր-Պետրոսեանը, փաստացի, յայտարարել է, որ ՀՀԿ-ին յաջողուել է ընտրութիւնների ժամանակ յաղթանակի հասնել բացառապէս 500 հազար մարդկանց ձայների շնորհիւ, ովքեր Հայաստանում չեն ապրում

Լեւոն Տէր-Պետրոսեանը, փաստացի, յայտարարել է, որ ՀՀԿ-ին յաջողուել է ընտրութիւնների ժամանակ յաղթանակի հասնել բացառապէս 500 հազար մարդկանց ձայների շնորհիւ, ովքեր Հայաստանում չեն ապրում: Տէր-Պետրոսեանը ոչ միայն մեղադրել է Հանրապետական կուսակցութեանը ընտրութիւնները կեղծելու համար, այլ լեւ ցոյց է տուել, որ յաջողը ընտրութիւնները նոյնպէս կեղծուելու են:

Իշխող կուսակցութիւնը պէտք է ինչ-որ կերպ պատասխանի այս մեղադրանքներին, հակառակ դէպքում լուրջութեանը դիտարկել է որպէս համաձայնութեան նշան: ՀՀԿ-ն պէտք է կամ դատի տա կոնգրէսին, պահանջելով պայցոյցներ, կամ էլ խոստովանի, որ 500 հազար ձայները նորմալ է եւ ժառանգել է դրանք նախկին իշխանութիւններից:

Նման լուրջ մեղադրանքների հանդէպ արձագանքի բացակայութիւնը բնութագրում է Հայաստանի ներկայիս քաղաքական իրավիճակը: Յանկացած այլ երկրում դրանք հրաժարականների շարքի, հրապարակային քննարկումների կը հանգեցնէին, իսկ Հայաստանում դա դիտարկում է որպէս «բնական» երեւոյթ: Մի խօսքով, այն այլ կերպ կը հնչէր, եթէ Լեւոն Տէր-Պետրոսեանը ելոյթից յետոյ իր խօսքը որպէս հայց ներկայացնէր դատարան եւ ապացոյցներ ներկայացնէր:

Սակայն բանը դատը չէ, եւ իշխանութիւնը անհրաժեշտ չի համարում արձագանքել նման յայտարարութիւնների, կարծես ցանկանալով ասել, թէ ի՞նչ է, դուք չէք կարողանում անել, այդ պատճառով էք ասում: Իսկ արդիւնքում ընտրութիւնները հերթական անգամ վերածուած են քաղաքական

գործարքի, որը բացառում է ընտրութիւն հասկացութիւնը:

Յոյս կար, որ հենց կոալիցիայի ներսում մրցակցութեան նման մի բան կը սկսի, սակայն այդ յոյսն էլ անհետացաւ, երբ Գազիկ Ծառուկեանը հաստատեց կոալիցիոն յուշագրին հաւատարիմ լինելը: Եթէ նախկինում նա խօսում էր խորհրդարանում 100 տոկոսանոց մեծամասնութիւն ստանալու մասին, ապա այժմ սահմանափակում է առկայ տեղերի պահպանմամբ:

Այսօր երեկոյեան տեղի կ'ունենայ ՀՀԿ Գործադիր մարմնի նիստը: Ամենայն հաւանականու-

թեամբ, այնտեղ կը գնայ նաեւ Գազիկ Ծառուկեանը, կամ էլ նոր յուշագրի տեքստը կը հրապարակուի, որը կը հաստատի, որ կոալիցիան իր մէջ չի պատերազմելու: Գործարքի գլխաւոր մասը կայացել է՝ Տէր-Պետրոսեանը պատրաստուած է արդար պայքարի, Ծառուկեանն ասում է, որ չի մրցակցելու ՀՀԿ հետ, եւ իրեն եղածը բաւարարում է, միւսները նոյնպէս առանձնապէս չեն ցանկանում ինչ-որ բան փոխել:

Այսպիսով, 500 հազար ձայների բաժանումը կարելի է աւարտուած համարել:

«ԼՐԱԳԻՐ»

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝  
ԳԱՐԻԷԼ ՄՈՒՅԵԱՆ  
ՍԱՐԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)

Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$80.00 (First Class)  
Canada \$120.00 (Air Mail)  
Overseas \$225.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY

**ՄԱՍԻՍ**  
ԱՄԵՆԱՎՍՏԱՆԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Չեր Ծանուցումները  
Վստահեցեք  
«Մասիս»  
Շարաքաքերթին  
T: (626) 797-7680 F:  
(626) 797-6863  
massis2@earthlink.net

ՀԱՅԱՍՏԱՆ

ՇԱՐՄԱԶԱՆՈՎԸ «ՀԱՆՐԱՅԱԲԱՔԱՅԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ» Է ՈՐԱԿՈՒՄ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Հանրապետական կուսակցության համար յստակ է, որ ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսը գնում է հերթական ընտրութիւններին:

«Հիմա փաստօրէն պարզ դարձաւ, որ նաեւ Կոնգրէսի առաջնորդն է գտնուում, որ գործնականում արտահերթ ընտրութիւնների հնարաւորութիւնը մեր երկրում բացառու է եւ նրանք աւելի մեծ յոյս են դնում ապագայ պաշտօնակազմի հերթական ընտրութիւնների հետ կապուած», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յայտարարեց Հանրապետական կուսակցութեան խօսնակ Էդուարդ Շարմազանովը:

Յիշեցնենք՝ Ուրբաթ, Հոկտեմբեր 28-ին ՀԱԿ-ի հրաւիրած հանրահաշիւ Կոնգրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը չբացառեց, որ հակառակ գործադրուած բոլոր ջանքերին, առաջիկայում հանրաւոր է եւ չլազողուի հասնել Սերժ Սարգսեանի հրաժարականին, ուստի այդ պարագայում, Տէր-Պետրոսեանի խօսքով, Կոնգրէսը պէտք է ձգտի Ազգային ժողովում ապահովել այնպիսի ծանրակշիւ ներկայութիւն, որն

առանձին կամ այլ ուժերի հետ կազմած դաշինքով, ի վիճակի լինի անմիջապէս բարձրացնելու Սերժ Սարգսեանի «պաշտօնակազմութեան, կամ այլ կերպ ասած, իմփիչմենթի հարցը»: ՀԱԿ առաջնորդը նաեւ յայտարարեց, որ ընդդիմութեան յաջորդ հանրահաշիւ կը կայանայ Նոյեմբերի 25-ին, որի ժամանակ աւելի կ'որոշակիացուեն Կոնգրէսի գործողութիւնները:

ՀԱԿ առաջնորդ, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի Հանրապետականի խօսնակը նաեւ անդրադարձաւ Սերժ Սարգսեանի «իմփիչմենթի» խնդրին, փաստելով, որ նախագահ Սարգսեանը Ազգային ժողովում ունի «ծանրակշիւ» յենարան ի դէմս բացարձակ մեծամասնութիւն կազմող Հանրապետական կուսակցութեան եւ նրա կողմից գործընկերների:

«Ապագայում էլ մենք մտադիր ենք ոչ միայն պահպանելու, այլեւ աւելացնելու մեր ներկայութիւնը օրէնսդիր մարմնում, իսկ դա նշանակում է, որ Կոնգրէսի առաջնորդի նման յայտարարութիւնը ընդամէնը հանրահաշիւին դասախօսութիւն է», - յայտարարեց Էդուարդ Շարմազանովը:

«ՎԵՐԱԴԱՍԱԻՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՊ ՉՈՒՆԵՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՅԵՏ»

Իրաւապաշտպան Միքայէլ Դանիէլեանի համար առնուազն զարմանալի է Սերժ Սարգսեանի այն յայտարարութիւնը, թէ մեր ոստիկանութիւնը Վլադիմիր Գասպարեանի նման մարդկանց կարիքն ունի:

«Նշանակում է, որ մինչ այս անպէտք մարդիկ էին աշխատում ոստիկանութիւնում: Սերժ Սարգսեանը խորը մտածեց, որ Ալիկ Սարգսեանի տեղն իր խորհրդակալի պաշտօնում է, բայց մի ուրիշ բան է ստացում, եթէ Ալիկ Սարգսեանն անպէտք էր, հիմա այդ մարդուն բերեց իրեն որպէս խորհրդական, դա՞ ինչպէս կը լինի, մտածելու տեղիք է տալիս», - նշեց իրաւապաշտպանը:

Միքայէլ Դանիէլեանը ողջունում է ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամեանի հրաժարականը: Նրա գնահատմամբ՝ խորհրդարանը Հովիկ Աբրահամեանի տեղը չէ:

Հելսինկեան ասոցիացիայի նախագահը կողմ է, որ Հովիկ Աբրահամեանին փոխարինի Պետտիրաւական հարցերի մշտական յանձնա-

ժողովի նախագահ Դաւիթ Յարութիւնեանը: «Գոնէ կը լինի մի մարդ, որին կարելի է ներկայացնել արտասահմանում», - նշեց պարոն Դանիէլեանը:

Հելսինկեան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցի կարծիքով էլ՝ իշխանական վերադասաւորումներով Սերժ Սարգսեանն իր իշխանութիւնն է ամբողջացնում ընտրութիւններից առաջ, եւ այդ փոփոխութիւնները ոչ մի կապ չունեն ժողովրդի հետ:

«Եթէ Սերժ Սարգսեանը Վովա Գասպարեանի նման մարդուն տանում՝ դնում է ոստիկանապետ, դա արդէն ցոյց է տալիս, որ փոփոխութիւնները կատարում են իրենց նեղ անձնական, ներքին խմբային շահերից ելնելով: Սերժ Սարգսեանի յայտարարութիւնը նշանակում է, որ նա ընդհանրութիւններ ունի Վլադիմիր Գասպարեանի բնոյթի մարդկանց հետ, որը իրաւական հարթութիւնում լուրջ խնդիրներ ունի», - «Ա1+»-ին ասաց Արթուր Սաքունցը:

ԼԵՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԵՐԱՆՈՐՅՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՍԱԻՐՆԵՐԻ ՅԵՏ

Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանն Նոյեմբեր 2-ին հանդիպել է Եւրոխորհրդարանի պատգամաւորների բազմակուսակցական (Ժողովրդականներ, պահպանողականներ եւ ռեֆորմիստներ, սոցիալ-դեմոկրատներ, լիբերալ-դեմոկրատներ) պատուիրակութեան հետ՝ Միլան Եաբրնոյի ղեկավարութեամբ:

ՀԱԿ-ից NEWS.am-ին յայտնում են, որ հանդիպման ընթացքում առաջին նախագահն անդրադարձ է կատարել Հայաստանի ներքաղաքական խնդիրներին, նշելով ինչպէս նախագահի, այնպէս էլ Ազգային ժողովի ոչ օրինակարգութիւնը, մասնաւորապէս 76 պատգամաւորների կողմից ձեռնարկատիրութեամբ

զբաղուելու փաստը: Մատնանշուել է երկրում հաստատուած համակարգային կոռուպցիան՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով, որոնք են իրաւական պետութեան եւ ժողովրդավարական ազատութիւնների բացակայութիւնը, ինչպէս նաեւ կեղծուած ընտրութիւնները:

Պատուիրակութեան անդամների խնդրանքով նախագահ Տէր-Պետրոսեանը ներկայացրել է Հայ Ազգային Կոնգրէսի մտնեցումները հայ-թուրքական յարաբերութիւնների եւ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման վերաբերեալ, ինչպէս նաեւ անդրադարձ է կատարել Հայաստանում մամուլի ազատութեան վիճակին:

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է «ԿՈՏՐՈՒԱԾ ՏԱՇՏԱԿԻ» ՄԱՍԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Չորեքշաբթի, Հոկտեմբերի 26-ին Ազգային ժողովում լրագրողների հետ կայացած ճեպագրոյցի ընթացքում վարչապետ Տիգրան Սարգսեանը, պատասխանելով հարցին, թէ ի՞նչ է կատարում իշխող քաղաքական կողմից ներսում, մասնաւորապէս, յայտարարել էր՝ այն քաղաքական ուժերը, որոնք կը համագործակցեն Հանրապետական կուսակցութեան հետ, կը շահեն, ովքեր չեն համագործակցի, «կը յայտնուեն կտրած տաշտակի առջեւ»:

«Իմ այդ յայտարարութեան կոնտեքստը արդէն հասկանալի էր ու յայտնի էր, որովհետեւ ես մէջբերեցի հանրապետութեան նախագահի յայտնի յայտարարութիւնը այն մասին, որ մենք ուզում ենք ընդդիմութեան հետ կառուցել համագործակցութեան կամուրջներ», - լրագրողների հետ հանդիպմանը պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին՝ թէ ո՞ր քաղաքական ուժերին է ուղղել իր յայտնի յայտարարութիւնը ասաց վարչապետ Տիգրան Սարգսեանը, - «Կարծում եմ, որ այն մարտահրաւէրները, որոնք մեզ սպասում են ապագայում, թելադրում են, որ այդ համագործակցութիւնը խիստ անհրաժեշտ է, այդ թւում նաեւ ընդդիմութեան հետ: Եթէ մենք տեսնում ենք դատարկութիւն էլեմենտներ եւ դատարկութիւն մտնեցումներ, ապա արձանագրում ենք, որ եթէ այդ մարդիկ մտադիր են ինչ-ինչ ցնցումների տանել մեր երկիրը, ապա նրանք յայտնուելու են կտրուած տաշտակի առջեւ, որովհետեւ մենք ունենք կարողութիւններ,



Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեան

ունենք հնարաւորութիւններ թոյլ չտալու հանրապետութիւնում ցնցումներ»:

Վարչապետի այդ խօսքերից յետոյ լրատուամիջոցներում հնչեցին մեկնաբանութիւններ, թէ Տիգրան Սարգսեանի խօսքը նախեւառջ ուղղուած էր «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեանը: Սրան ի պատասխան՝ վարչապետի մամուլի քարտուղար Արամ Անանեանը հանդէս եկաւ յայտարարութեամբ, որում ասուած էր, թէ վարչապետի խօսքը «ուղղուած էր քաղաքական դաշտի բոլոր այն ուժերին, որոնք երկիրն առաջ մղելու նախաձեռնութիւններում համագործակցելու փոխարէն ինքնանպատակ պայքար են ծաւալում»: Անանեանը նաեւ ասել էր, - «ԲՀԿ-ն մեր կողմից գործընկերն է, եւ հարկ չկայ յօրինուածքներ շրջանառել մի բանի մասին, որը ոչ միայն անհեթեթ է, այլեւ ուղղակի սուտ է»:

ԴԱՅԿ-Ը ՀԱՆԵԼ Է «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՍԱՆԱԿ»Ի ԳՈՅՔԻ ԵՒ ՀԱՇԻՒՆԵՐԻ ԿԱԼԱՆՔԸ

«Հայկական Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանը «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց, որ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայութիւնը հասնել է խմբագրութեան գոյքի եւ հաշիւների վրայ դրուած կալանքը:

ԴԱՀԿ-ը յօգուտ պատգամաւորներ Ռուբէն Հայրապետեանի, Լեւոն Սարգսեանի ու Սամուէլ Ալեքսանեանի թերթից բռնագանձել է իւրաքանչիւրի համար 2 միլիոն 44 հազար դրամ: Նիկոլ Փաշինեանը յայտնեց նաեւ, որ ինքը հրաժարուել է գումարը կամաւոր փոխանցել, ուստի հարկադիր ծառայութիւնը ամբողջ գումարի 5 տոկոսի չափով՝ 311 հազար 700 դրամ տոյժ է սահմանել՝ ընդհանուր առմամբ գանձելով 6 միլիոն 545 հազար 700 դրամ:

Կատարելով դատարանի վճարի միւս պահանջը՝ թերթը Հոկտեմբերի 26-ի համարի առաջին էջին տպագրել էր «Հայկական Ժամա-



նակի» անցած տարուայ Հոկտեմբերի 14-ի համարում «Ութից եօթը ցուցակում են» վերնագրով հրապարակուած տեղեկութիւնները պատգամաւորները իրենց պատուին ու արժանապատուութեանը հասցուած վիրաւորանք էին համարել:

Դատարանի սահմանած գումարը վճարելու համար յօգուտ «Հայկական Ժամանակ»ի անցկացուեց հանգանակութիւն եւ խմբագրութեանը յաջողուեց հաւաքել ողջ գումարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ 2012 ԹՈՒՎԱԿԱՆԻՆ ԿԸ ԿԱԶՄԵՆ ՀՆԱ-Ի 3,6 ՏՈԿՈՍԸ

Հայաստանի պաշտպանական ծախսերը 2012 թուականին կը կազմեն 154,6 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 3,6 տոկոսը: Համեմատութեան համար նշենք, որ այդ ծախսերն աւելացել են 5,7 տոկոսով: Այս մասին նշուած է 2012 թուականի պետական բիւջէի նախագծում, որի վերաբերելու յաւանդներն սկսուել են երկրի խորհրդարանում:

Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանն, ԱԺ-ում յայտնել է, որ կադրային գինծառայողների միջին աշխատավարձը մնացել է նոյնը: Լրացուցիչ միջոցներ են յատկացուելու ԶՈՒ գործող տեխնիկական բազաների պահպանման համար:

# ԼՈՒՐԵՐ

## ՍԱՐԳՍԵԱՆ ԶԵ ՆԵՂԱՑԱԾ ՍԱԿԱՇՎԻԼԻԷՆ

Վրաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը հերքած է այն տեղեկութիւնը, թէ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան «վիրաւորուած է Վրաստանի նախագահին», այդ պատճառով ալ չեստաձգած է Նոյեմբերի սկիզբը նախատեսուած պաշտօնական այցը թիֆլիս:

«Կը փափաքիմ վստահեցնել Ձեզի, որ այդ տեղեկութիւնը իրականութեան չի համապատասխաներ», - յայտարարած է Վրաստանի արտաքին գործոց փոխնախարար Նինօ Գալանտաձէ:

Անոր խօսքով, Սարգսեանի այցը չէ յետաձգուած, պարզապէս այցի յստակ ժամկէտը յայտնի չէ եղած, եւ այդ հարցի շուրջ աշխատանք կը տարուի:

Նախապէս հայկական մամուլին մէջ տեղեկութիւն տարածուած էր, թէ Սերժ Սարգսեան Սաակաշվիլիէն վիրաւորուած է այն յայտարարութեան համար, որ վերջինը ըրած էր հայ-վրացական սահմանին տեղի ունեցած սողանքին առնչութեամբ:

Սաակաշվիլի, մասնաւորապէս, ըսած էր, որ Վրաստանի կառավարութիւնը երկու ժամու մէջ կը



Սարգսեան եւ Սաակաշվիլի կը մնան լաւ բարեկամներ

մաքէր սողանքի տարածքը:

«Տեսաք, թէ որքան երկար ժամանակ ունէ մէկը չէր գար ճանապարհը մաքրելու: Ես չեմ ուզեր Հայաստանի մասին վատ բան ըսել, անոնք մեր բարեկամներն են, բայց Ռամազ Նիքոլաիշվիլին ալ աւելի բարդ խնդիրներ լուծած է քանի մը ժամու մէջ: Իսկ Հայաստանէն անոր համար գրեթէ երկու շաբաթ պահանջուեցաւ: Ահա թէ ինչ կը նշանակէ արդիւնաւէտ պետական աշխատանք», - ըսած էր Սաակաշվիլի:

## ԱՄՆ-Ը Կ'ԱԶԱԿՑԻ ԳՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ԳՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Միացեալ Նահանգները կառավարութիւնը կ'աջակցի Հայաստանին առաջիկայ համազգային ընտրութիւնները միջազգային չափորոշիչներին համապատասխան անցկացնելու համար:

Հոկտեմբեր 31-ին հանդիպելով լրագրողներին հետ՝ Հայաստանում Միացեալ Նահանգները արտակարգ եւ լիազօր դեսպան Ջոն Հեֆերնը նշեց, որ գալով Հայաստան՝ հանդիպումներ է ունեցել Հայաստանի նախագահի ու արտաքին գործերի նախարարի հետ: Նրանց հետ քննարկումներում ԱՄՆ-ի դեսպանը անդրադարձել է ինչպէս Հայաստանի, այնպէս էլ տարածաշրջանային խնդիրներին առնչուող հարցերի:

«Ես Հայաստանի իշխանութիւններին շնորհաւորեցի բոլոր այն դրական տեղաշարժերի ու քայլերի համար, որ նրանք իրականացրել են այս տարի: Եւ ես խոստանում եմ, որ Միացեալ Նահանգները կառավարութիւնը կ'աջակցի Հայաստանին առաջիկայ ընտրութիւնները միջազգային



Միացեալ Նահանգների դեսպան Ջոն Հեֆերն

չին չափորոշիչներին համապատասխան անցկացնելու համար», - ասաց դեսպանը:

Ջոն Հեֆերնը յաւելեց, թէ արդար ու թափանցիկ ընտրութիւնների ապահովման կարեւոր գործօններից մէկը ազատ մամուլն է՝ «եւ դա այն խնդիրներց մէկն է, որը մենք քննարկել ենք իշխանութիւնների հետ»:

## ՌԱՃԸՓ ԶԱՐԱՔՕՂՈՒ

Մարտնականութեան էջ 1-էն

ձայն Ջարաքողու խօսքի ազատութեան եւ մարդու իրաւունքներու բաւական ակնառու պաշտպաններէն մէկն է Թուրքիոյ մէջ:

«Այդ իսկ պատճառով ալ անոնք կ'ուզեն պատժել: Այս յստակ քաղաքական դրդապատճառներ ունեցող գործ է», - համոզուած է «Ակօսի» խմբագիրը:

Ռաճըփ Ջարաքողու իր հրատարակչական գործունէութեան համար մի քանի անգամ ենթարկուած է դատական հետապնդումներու: 2005-ին Ջարաքողուի դէմ քրէական գործ յարուցուած է պատմաբան Դորա Սաքայեանի «Հայ Բժիշկը Թուրք»

իոյ Մէջ» աշխատութեան թրքական տարբերակի հրատարակութեան համար: Այս աշխատութիւնը կը պատմէր 1922 թուականին քեմալական ուժերու կողմէ Ջմիւռնիոյ մէջ (Իզմիր) տեղի ունեցած Չարդերու մասին:

Մէկ այլ հայագրի հեղինակի՝ Լոնտոն բնակող ձորձ ձէրէձեանի «Ճշմարտութիւնը Կ'ազատագրէ Մեզ» գիրքի համար եւս Ջարաքողուի դէմ քրէական գործ յարուցուցուած էր թիւ 301 յօդուածով:

2008-ին Ջարաքողուի մեղաւոր գտնուելով դատապարտուեցաւ 5 ամսուայ բանտարկութեան, սակայն հետագային դատարանը պատիժը փոխարինեց տուգանքով:

## ՎԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՓԼՈՒԱԾ Է ՎԱՐԱԳԱՅ ՎԱՆՔԸ



Վանի երկրաշարժէն յետոյ փլուած Վարագայ վանքը

Վանում Հոկտեմբերի 23-ին տեղի ունեցած ուժգին երկրաշարժից յետոյ Վարագայ վանք է այցելել NEWS.am-ի թղթակիցն ու լուսանկարել երկրաշարժից յետոյ փլուած Վարագայ վանքը:

Աւելի վաղ NEWS.am-ը յայտնել է, որ Վանի Վարագայ վանքը լուրջ վնասուել է 7,2 աստիճան ուժգնութեամբ երկրաշարժից:

Նախկինում NEWS.am-ի թղթակիցը Վանից տեղեկացրել էր, որ Աղթամարի Սուրբ Խաչի վերաբացումից յետոյ Իւքարըբաբը լաչլըի գիւղացիները գիմել էին Վանի նահանգապետարան եւ մշակոյթի ու տուրիզմի նահանգային վարչութիւն՝ իրենց գիւղում գտնուող եկեղեցական համալիրը վերականգնելու համար:

Յիշեալ գիւղի իմամ Մեհմեդ

Չոբանը NEWS.am-ի թղթակցի հետ գրոյցում նշել էր, որ Վարագայ վանքի վերանորոգման համար անհրաժեշտ է հարեւանութեամբ գտնուող մզկիթը քանդել: «Նոր մզկիթն արագօրէն կառուցուում է: Հենց այն կառուցուեց, հինը քանդուելու է եւ կը սկսուի Վարագայ վանքի վերականգնումը», - նշել էր իմամը՝ շեշտելով, որ պատասխանատուները Վարագայ վանքի վերանորոգման սկսման տարեթիւ են նշել 2012-ը:

Գիւղի իմամը շեշտել էր, որ Տուրիզմի եւ մշակոյթի վանի նահանգային վարչութեան աշխատակիցները եկել են Վարագայ վանք՝ իրենց հետ բերելով վերականգնման նախագիծը, որը ներառում էր վանական համալիրի ամբողջական վերանորոգում:

## ԳՅԱՍՏԱՆԸ ՔՈՒԷԱՐԿԵԼ Է «ՈՒՆԵՍԿՕ»-ԻՆ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԱՆԴԱՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՂՄ

Ըստ Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի կազմակերպութեան (UNESCO) հրապարակած պաշտօնական տուեալների, Հայաստանը կողմ է քուէարկել Պաղեստինին կազմակերպութեան անդամի կարգավիճակ շնորհելուն: Հարաւորակաւ տարածաշրջանի երկրներից կողմ են քուէարկել նաեւ Թուրքիան, Իրանը եւ Ադրբեջանը: Վրաստանը ձեռնպահ է մնացել:

Միացեալ Նահանգները, մինչդեռ, ի պատասխան Պաղեստինին անդամի կարգավիճակ շնորհելուն, դադարեցրել է «ՈՒՆԵՍԿՕ»-ին ֆինանսաւորումը:

Այս որոշման պատճառ է հանդիսացել 90-ականներին ԱՄՆ-ում ընդունուած օրէնքը, որը պարտադրում է Վաշինգտոնին դադարեցնել ՄԱԿ-ի ցանկացած մարմնի ֆինանսաւորումը, եթէ այն համաձայնի Պաղեստինին որպէս անդամ ընդունել նախքան Իսրայէլի հետ բանակցային ճանապարհով խաղաղ կարգաւորման հասնելը:

Փարիզում անցկացուած «ՈՒՆԵՍԿՕ»-ի 36-րդ Գլխաւոր համաժողովում ձայների 107 կողմ, 14 դէմ, 52 ձեռնպահ յարաբերակցութեամբ որոշում կայացուեց Պաղեստինին որպէս 195-րդ պետութիւն կազմակերպութեան թիւում ընդգրկելու վերաբերեալ:

Իսրայէլը, Գերմանիան, Նի-



«ՈՒՆԵՍԿՕ»-ի Փարիզի կեդրոնատեղի

դեռ լանդները, Շուեդիան եւ Միացեալ Նահանգները որոշման դէմ քուէարկող երկրների շարքում էին:

Միացեալ Նահանգները տարեկան շուրջ 70 միլիոն դոլար է նուիրաբերում «ՈՒՆԵՍԿՕ»-ին, ինչը կազմում է այդ կազմակերպութեան ընդհանուր բիւջէի շուրջ մէկ քառորդ մասը: Նոյեմբերին ՄԱԿ-ի կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի կազմակերպութեան համար նախատեսուած գումարների մի զգալի մասը՝ շուրջ 60 միլիոն դոլար, փաստօրէն չի փոխանցուի:

Յիշեցնենք, մօտ 1 ամիս առաջ Պաղեստինեան Ինքնավարութեան նախագահ Մահմուդ Աբասը պաշտօնապէս դիմեց ՄԱԿ-ին՝ անդամութիւն ստանալու հարցով, չնայած ԱՄՆ-ը եւ Իսրայէլի դաշնակից մի շարք գարգացած երկրներ նրան կոչ էին անում չզնայ այդ քայլին:

ՎԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՎԱՐՑԱԶՐՈՅՑ Ա.Դ.Յ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ՅԱԿՈԲ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ ՅԵՏ «Մենք ստիպուած ենք լաւատես ըլլալ մեր հայրենիքին հանդէպ...»

Ի՞նչ առիթով վերջին անգամ մեկնեցաք Յայաստան:

18-21 Սեպտեմբերի ընթացքին, որպէս Ա.Դ. Ննչակեան Կուսակցութեան պատուիրակութեան անդամ, այցելեցի հայրենիք, ներկայ գտնուելու Սփիւռք-Հայրենիք խորհրդատուական խորհրդակցութեան 20 ամեակի տօնակատարութիւններուն:

Ի՞նչ էին Յայաստան-Սփիւռք համաժողովին հիմնական խնդիրները, միտք բանին եւ եզրակացութիւնները:

Խորհրդատուական խորհրդակցութեան ընթացքին, որոնք ուղղակի կը մտահոգեն Սփիւռքը, ինչպէս նաեւ Հայաստանը.-

ա.- Լեզուի եւ կրթութեան հիմնարկները:

բ.- Երիտասարդական հիմնարկները:

գ.- Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացին եւ անոր ոգեկոչման 100-ամեակին ընդառաջ:

դ.- Սփիւռք-Հայաստան համագործակցութեան կառուցակարգի մասին:

Երկու օր շարունակ բոլոր նիւթերը քննարկուեցան աշխարհի տարբեր կողմերէ շուրջ 400 ներկայացուցիչներու կողմէ, որոնք առիթը ունեցան ելոյթներ ունենալու, առաջարկներ ներկայացնելու եւ տեսակէտներ յայտնելու: Որմէ ետք, խորհրդատուական խորհրդակցութեամբ ու մամուլի ասուլիսով եզրափակեց իր աշխատանքները:

Սակայն կայ ընդհանուր տարածուած կարծիք, թէ մնացած համաժողովները աւելի ունին ցուցադրական բնույթ, ընթացիկ շօ-եր են ժողովուրդին ներկայացուող: Յամաձա՞յն



էք այս կարծիքին հետ:

Այս կարծիքը համատարած իրականութիւն է, որովհետեւ կը պակաս գործնական քայլեր առնելու մեքանիզմը: Աւելին, այս խորհրդատուական խորհրդակցութեան որեւէ լիազօրութիւն չունին որոշումներ առնելու կամ հարցեր լուծելու: Հետեւաբար, անոնք դատապարտուած են մնալու իրենց խորհրդատուութեան եւ աւանդութեան մէջ: Սակայն հոս կ'ըզգեմ աւելցնել հետեւեալը.- հայ ժողովուրդին համար անհրաժեշտութիւն են այսպիսի խորհրդատուները, քանի առիթը կ'ընծայեն իրարու քով բերելու Հայաստանի, Սփիւռքի եւ Արցախի ղեկավարութիւնները: Այս սրբազան երրորդութիւնը որքան իրարու աւելի մօտ ըլլայ, որքան աւելի իրարու ամուր ձեռք սեղմած ըլլայ, այնքան աւելի հզօր կ'ըլլայ հայ ժողովուրդը, Հայաստանը, Արցախը եւ Սփիւռքը: Հետեւաբար, ես կը հաւատամ, որ այս խորհրդատուները անհրաժեշտ են թէկուզ եթէ անոնք ձեւական բնույթ կը կրեն:

Ինչքան գիտեմ, յաճախ եղած էք Յայաստան տարբեր ժամանակաշրջաններու: Վերջին շրջանին նկատելի յառաջընթաց նկատեցի՞ք, դրական գարգացումներու ականատես եղա՞ք:

Գիտէք ինչ, ամէն ինչ ըսել վարդազոյն է կամ սեւ, սխալ պիտի ըլլար այս պահուն: Նկատելի յառաջընթաց կ'աչ, այո կայ: Հայաստանը կայացած պետութիւն է այլեւս, պետականութիւնը օրէցօր աւելի կ'ամրապնդուի, հայկական բանակը երաշխիքն է շրջանի խաղաղութեան եւ կայունութեան: Սակայն, դժբախտաբար, ասոնք կողքին կայ նաեւ գործազրկութեան թիւի աճ, արտագաղթի շարունակուող հոսք, որոնք պէտք է Հայաստանի պետութեան քննարկելիք գլխաւոր հարցերէն դառնան այլեւս:

Սամուլէն յաճախ կը տեղեկանանք, թէ Յայաստանի ժողովուրդին մօտ կայ ընդհանուր դժգոհութիւն, յուսահատութիւն եւ ընդվզում: Նաեւ Յայաստանի ընդհանուր կարտայայտուի երկրի ընկերային-տնտեսական ժամը իրավիճակի մասին: Նման մթնոլորտ եւ երեւոյթներ մշակուող ընթացք:

Յաւաբար սրտի ասոնք իրականութիւն են: Ժողովուրդին մօտ կայ այդ բոլորը: Փաստ է նաեւ, թէ անկախութեան 20 տարուան ընթացքին գործազրկուած տնտեսական եւ ընկերային քաղաքականութիւնները, որոնք կիրառուեցան երեք յաջորդական նախագահներու կողմէ ժողովուրդը հասցուցին այս վիճակին:

Հետեւաբար, յետապահ միակ լուծումը, Հայաստանի տնտեսական եւ ընկերային իրավիճակի

բարելաւման, համակարգի փոփոխութիւնն է: Համակարգ, որ հիմնուած կ'ըլլայ ընկերային արդարութեան վրայ, հաւասար հնարաւորութիւններ տալով բոլորին: Այսօրուան համակարգը գուրկ է հաւասար հնարաւորութիւններէ եւ ազատ գործընթացէ: Այսօրուան օլիգարխիք համակարգը յոյս չի ներշնչեր երբեք:

Դուք որպէս հայ ազգային քաղաքական կեանքէն ներս գործող դեկավար, Յայաստանի անկախութեան 20-րդ տարեդարձին առիթով, դժուարին ճանապարհէ անցած մեր հայրենիքին նկատմամբ լաւատեսական խօսքեր ունի՞ք արդե՞ք:

Այսօրուան անկախ Հայաստանը 20 տարեկան է: Հազարաւոր նահատակներու երազը մասամբ մը իրականացած է: Մենք ստիպուած ենք լաւատես ըլլալ մեր հայրենիքին հանդէպ. բայց նաեւ ըլլալ իրատես: Տակաւին երկար ճամբայ կայ կտրելիք, շատ գործեր կան կատարուելիք:

Անհրաժեշտութիւններ են՝ Հայաստան-Սփիւռք-Արցախ միասնականութեան ամրապնդումը, ազգային գերագոյն մարմնի գոյացումը, համազգային հարցերու՝ համազգային լուծում տալը, Հայկական Յեղասպանութեան ճանաչման եւ պահանջատիրութեան նոր մարտահրաւէրները, Արցախի անկախութեան միջազգային ճանաչման գործընթացը:

Հայաստանը միայն իշխանութիւնները չեն: Հայաստանը մեր սրբութիւն սրբոցն է եւ մեր բոլորին հայրենիքը:

Հարցազրոյցը վարեց՝ Գեորգ Զէյթունցեան «ԱԶԱՏ ԶԱՅՆ» ԿԻՊՐՈՍ

«ՍԵՒ ՕՐՈՒԿԱՆ» ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ Ի ԴԵՄ ՍՓԻՒՔԻ ՈՒՆԻ ՀԶՕՐ ՊԱՅՈՒՏ

Հայաստան ունի հսկայական միջազգային սփիւռք, որ ազդեցութեան առումով կարելի է համեմատել միայն հրէական սփիւռքի հետ: Այս մասին ատրպէյճանական «Զերբալօ» պարբերականին տուած հարցազրոյցին ըսած է Ռ.Դ. Պետական Դոմայի պատգամաւոր, քաղաքագէտ Սերգէյ Մարկովը:

Խօսելով Հայաստանի մէջ տիրող տնտեսական իրավիճակի մասին՝ Մարկով ըսած է, որ ան բաւական ծանր է:

«Այդ իրավիճակը կը ծանրացնէ նաեւ այդ փոքր երկրի՝ շրջափակուած ըլլալու հանգամանքը: Շատ հարցերու մէջ ան կախուած է վրացական իշխանութիւններու քմահաճոյքներէն», - ըսած է ռուս քաղաքագէտը՝ ընդգծելով, որ այդ բոլորին հակառակ, Հայաստան ունի հզօր սփիւռք:

«Հայաստան ունի հսկայական միջազգային սփիւռք, որ ազդեցութեան առումով կարելի է համեմատել միայն հրէական



համաշխարհային սփիւռքի հետ: Իսկ սփիւռքը կ'օգնէ, թոյլ չի տար՝ անկում ապրի հայկական տնտեսութիւնը: Պէտք է հաշուի առնել նաեւ այն հանգամանքը, որ Հայաստանի տնտեսութիւնը նման ծանր իրավիճակի մէջ առաջին տարին չէ, որ յայտնուած է: Սակայն «սեւ օրուան» համար Հայաստան, ի դէմս սփիւռքի, ունի հզօր պահուստ, որ վճարական պահուն կ'օգնէ անոր», - ըսած է Սերգէյ Մարկով:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՇՏՕՆԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շաբաթական 1-էն

անձը:

Հրաժարականներ ներկայացուցած են նաեւ Ոստիկանութեան մի քանի բարձրաստիճան պաշտօնեաներ: Տեղեկութիւններ կան, որ բարձրաստիճան ոստիկաններու՝ աշխատանքէ ազատուելու մասին զեկուցագրեր ներկայացնելը կապուած է նոր ոստիկանապետի նշանակման հետ:

Այս փոփոխութիւններու կապակցութեամբ քաղաքական մեկնաբան Յակոբ Բաղալեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին ըսաւ.- «Մինչեւ հիմա Հայաստանում, այսպէս ասենք՝ միջանկեալ իշխանութիւն էր ձեւաւորուած, որը մի քիչ Ռոբերտ Քոչարեանի իշխանութիւնն էր, մի քիչ՝ Սերժ Սարգսեանի: Եւ ընտրութեան շեմին, մանաւանդ նկատի ունենալով Հա-

յաստանում իշխանական համակարգի տրամաբանութիւնը, Սերժ Սարգսեանը, բնականաբար, պէտք է իր իշխանութիւնը ձեւաւորէր, որպէսզի կարողանար նաեւ վերահսկել ընտրութեան գործընթացն ամբողջութեամբ»:

Բաղալեան «միջանկեալ իշխանութեան» տարր նկատեց նաեւ խորհրդարանի նախագահին: «Կարծում եմ, Յովիկ Աբրահամեանի Ազգային ժողովի նախագահ դառնալը հենց միջանկեալ իշխանութեան տրամաբանութեամբ է: Եւ երբ Սերժ Սարգսեանը փորձում է արդէն իր իշխանութիւնը ձեւաւորել, այդ ուղղութեամբ պէտք էր աւելի յստակեցում մտցնել, եւ միջանկեալ իշխանութիւն տրամաբանութիւնը այդ առումով դուրս եկաւ Յովիկ Աբրահամեանի հետ միասին», - կարծիք յայտնեց ծանօթ քաղաքական մեկնաբան Յակոբ Բաղալեան:

massispost.com daily news updates QR code

533 W. Glenc Oaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065 Dr. Missak Ekmekdjian Chiropractor Dr. Anahid Ekmekdjian Chiropractor

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏԵՆ՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՀԱՅԹ ՊԱՐԵՏ Ծ. Վ. ԵՐԷՑՅԵԱՆ

Հետաքրքրություններ կարգա-  
ցի Ասպարէզ օրաթերթի Ուրբաթ  
14 Հոկտեմբեր 2011 (յատուկ բա-  
ժին՝ նուիրուած Մեծի Տանն Կի-  
լիկիոյ կաթողիկոսին), որուն մէջ  
Միւստֆ Ծ.Վ. Ազնիկեան կը գրէ եւ  
կը բացատրէ Մեծի Տանն Կիլիկիոյ  
կաթողիկոսութեան «Վաղարշապա-  
տէն Անթիլիաս» պատմական երթը  
եւ իրագործումները:

Որքան ալ մեր սրտին մօտիկ  
հաստատութեան իրագործումնե-  
րուն մասին է որ կը ջատագովէ  
հայր սուրբը, սակայն դրդապատ-  
ճառը, վստահաբար Մեծի Տանն  
Կիլիկիոյ կաթողիկոսին՝ Նորին Ս.  
Օծութիւն Արամ Ա.ի այցելու-  
թիւնն էր Գալիֆորնիա, եւ իբր  
յարմար պարագայ մը իր պատ-  
մածներու կողքին՝ ան կը յայտնէ  
«իր գաղափարները» որոնք ես կը  
խորհիմ չեն համապատասխաներ  
պատմական իրականութեանց, նա-  
եւ, չեն համապատասխաներ Հայց.  
Եկեղեցւոյ միութեան ոգիին, եւ  
ընդհանուրին օգտին: Յօդուածը  
ձգտում մը եւ ճիգ մըն է բան մը  
հասկնելու՝ «խաղին մասնակցե-  
լու», եւ մենք՝ իրեն այդ առիթը  
պիտի տանք:

Իմ մատնանշելի կէտերը հե-  
տեւեաններն են. հայր սուրբը իր  
խօսքը յառաջ մղելու պատրուա-  
կով կը գրէ այս ամբողջ յօդուածը  
ըսելու համար «1441 թուականէն  
սկսեալ, Հայց. Եկեղեցին ունեցաւ  
գոյգ կաթողիկոսներ, համահաւա-  
սար իրաւասութիւններով եւ թե-  
մական անկախ կազմակերպութիւն-  
ներով»: Եւ քիչ մըն ալ յառաջ  
երթալով կը փորձէ նաեւ այն  
սպաւորութիւնը թողուլ, թէ՛ Ան-  
թիլիասի Աթոռը շարունակութիւնն  
է Վաղարշապատի Աթոռին: Յօդ-  
ուածին վերագրել «Վաղարշապա-  
տէն Անթիլիաս» այդ կը թելադրէ:  
Մեր յարգելի յօդուածագիր հայր  
սուրբը կը շարունակէ ըսելով թէ՛  
«Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը  
պատմական բաւական հարուստ  
փորձառութիւն ունի միջ-եկեղե-  
ցական բնագաւառէն ներս, ընդ-  
հանրապէս Դ, Ե, միջին դարերուն  
ու մասնաւորաբար կիլիկեան ժա-  
մանակաշրջանի ժԲ դարուն»:  
Արդեօ՞ք ըսել կ'ուզէ որ Կիլիկեան  
Աթոռը գոյութիւն ունէր Դ եւ Ե  
դարերուն: Այս ինչ անհեթեթ տրա-  
մաբանութիւն եւ արտասովոր գիւտ:

Անդրադառնալով արտասահ-  
մանի թեմերուն, յօդուածագիրը  
կը շարունակէ ըսել «Կիլիկիոյ  
կաթողիկոսութիւնը 1957-58 տա-  
րիներուն ընդառաջելով սփիւռ-

քահայ գանազան գաղութներու՝  
իրանի, Յունաստանի եւ Միացեալ  
Նահանգներու ինդրագիրներուն իր  
հովանիին եւ հոգեւոր հոգածու-  
թեան ներքեւ կ'առնէ գանոնք,  
անոնք երկար տարիներ անհովիւ  
եւ հոգեւորապէս անմխիթար լքուած  
էին: Ճիշդ է, դէպքեր եւ անիմաստ  
դրդումներ պատահած են երկուս-  
տեք եւ Դո՛ւք պատճառը շատ լաւ  
գիտէք: Ինչ որ եղած են մասնակի  
եւ կամ տեղական հանգամանք ու-  
նեցած են: Եւ այդ երբեք չէ եղած  
մեր թեմի առաջնորդներուն եւ  
նուիրապետական կարգերու ըն-  
թացքը եւ գործունէութիւնը:

Ուստի, չեմ բաժներ յօդուա-  
ծագիրին պատմական փաստերու  
սխալ հասկացողութիւնն ու մեկ-  
նութիւնը:

Կիլիկեան Աթոռին կանոնա-  
կանութիւնը պաշտպանելու հա-  
մար գարտուղի միջոցառումնե-  
րու հարկը չեմ տեսներ: Հայ Ան-  
թիլիասը այսօր իրականութիւն  
մըն է մեր ազգային-եկեղեցական  
կեանքին մէջ: Բիւր յարգանք երա-  
նաշնորհ հանգուցեալ հայրապե-  
տացն Սահակ Խաչապետի կաթողի-  
կոսի, աթոռակից Բաբգէն կաթո-  
ղիկոսի, Սարաճեան Պետրոսի, Գա-  
րեգին Յովսէփեանցի եւ այլոց որոնք  
«ազնուական արթնամտութիւնը ու-  
նեցան անխախտ պահելու համե-  
րաշխութեան եւ սիրոյ սկզբունքը,  
որ մեր ազգային-վարչական կեան-  
քի խարխիսն ու կանոնն է եղած  
միշտ եւ պէտք է լինի յաւէտ»:  
Ուստի պէտք է խուսափիլ շփոթե-  
ցուցիչ եւ անպատասխանատու ար-  
տայայտութիւններէ, որոնք միայն  
կը շահարկուին ի վնաս ընդհանու-  
րի օգտին եւ կը մնան անմարսելի:

Բայց յանկարծ կ'անդրադառ-  
նամ՝ «Ահ» այս գանգակն ալ ի՞նչ  
է, որ այս ժամուն կը հնչէ»:

Անցնինք մեր նիւթին:

Կիլիկիոյ Գրիգոր Թ. Մուսա-  
բեկեանց կաթողիկոս թէ՛եւ մերժեց  
արեւելեան վարդապետներու հրա-  
ւէրը որ ինք անձամբ երթայ էջմ-  
իածին եւ հոն իր պատմական  
տեղւոյն վրայ հաստատուի: Այսու-  
հանդերձ արտօնեց որ էջմիածնի  
մէջ ազգային-եկեղեցական ժողով  
գումարուի, եւ իր հաւանութեամբ՝  
ընտրել նոր կաթողիկոս եւ Աթոռը  
փոխադրել Սիսէն էջմիածին (Մե-  
ծոփեցի, Օրմանեան, Կիւլէսերեան):  
«Եւ եթէ ինչ գտէր Կիրակոս Վիրապե-  
ցին կաթողիկոս էջմիածնի, եւ այս  
եղեւ յամի տեսուն 1441 եւ հայոց  
ՊՂ թուին» (Մաղաքիա դպիր):

Ահաւասիկ հոս է բուն հարցին  
չութիւնը:

Ինչ որ ալ ըլլան պատճառներ-

ըր Մուսաբեկեանցի Կիլիկիա մնա-  
լուն եւ կամ այլուր (շատեր նոյ-  
նիսկ կը խորհին որ Եգիպտոս  
գացած եւ հոն վախճանած է), ինչ  
որ ալ ըլլան արեւելեան վարդա-  
պետներու յետագային յարուցած  
ինդիւրները, բոլորն ալ երբեք չեն  
կորսնցնել իրաւական արդարա-  
ցումը Աթոռին փոխադրութեան:  
Բոլորն ալ գիտենք տեղափոխու-  
թիւնները միշտ կատարուած են  
պատմական ստիպողութեանց ներ-  
քեւ:

Կիլիկիա եւ միւս բոլոր վայ-  
րերը, Դուինէն մինչեւ Սիս, ուր  
ժամանակ առ ժամանակ ամենայն  
հայոց հայրապետներ հաստատուե-  
ցան ինչ-ինչ պատճառներով մին-  
չեւ 1441 թուականը, բոլորն ալ  
եղած են ամենայն հայոց կաթողի-  
կոսութեան նստոցներ: Ուստի կը  
մնան իրաւականօրէն, ճշմարտա-  
պէս եւ կանոնագիտական իմաստով  
ամենայն հայոց հայրապետներ, ան-  
կախ իրենց տեղագրական եւ աշ-  
խարհագրական վիճակներէն:  
«Ստույգ է հետեւաբար որ Ս. էջմ-  
իածնի Աթոռն է որ փոխադրուած  
էր նոյն վայրերը, ու այդ իսկ  
պատճառաւ, արեւմուտք հաստատ-  
ուած կաթողիկոսները յաճախ կը  
ստորագրէին «Կաթողիկոս Ս. էջմ-  
իածնի պանդխտեալ ի Սիս» (Սի-  
ոն): Որքան ալ ընդհանուր պատ-  
կերը միւլթարական չըլլար, Լու-  
սաւորչի Աթոռին փոխանցումը Սի-  
սէն էջմիածին, բառին կանոնագի-  
տական առումով, կը կազմէ օրինա-  
ւոր շարունակութեան շղթան, Մու-  
սաբեկեանց, Վիրապեցի եւ յա-  
ջորդներ մինչեւ այսօր: Որովհե-  
տեւ ամենայն հայոց հայրապետա-  
կան Աթոռին վերադարձն էր ի Ս.  
էջմիածին, ազգային-եկեղեցական  
ժողովի որոշմամբ եւ Մուսաբեկ-  
եանց կաթողիկոսի արտօնութեամբ  
եւ հաւանութեամբ: Անոնք որոնք  
կը խորհին թէ Կիլիկիոյ Աթոռը  
ուղղակի Լուսավորչի կաթողիկո-  
սական գիծին շարունակութիւնն է  
կամ Շնորհալիի, այդպիսիներ հե-  
ռու են պատմութեան իրականու-  
թենէն, եւ զուրկ «ի դպրութենէն  
կենաց»:

Եթէ այսօր ազգային-եկեղե-  
ցական ժողովը հասկնալի իրա-  
դարձութեանց հետեւանքով եւ Աթո-  
ռին ապահովութիւնը ի մտի ունե-  
նալով, փորձէ փոխադրել Մայր  
Աթոռը այն տեղը կամ միջավայրը  
ուր ինք կը նկատէ ամենանպաստա-  
ւորը Մայր Աթոռի շարունակու-  
թեան եւ կամ գոյատեւման, իր  
կանոնական իրաւունքին մէջն է:  
Որովհետեւ՝ եկեղեցւոյ բարձրա-  
գոյն հեղինակութիւնն է, ինչպէս  
որ էր պարագան 1441ին էջմիածին  
գումարուած ազգային-եկեղեցական  
ժողովը:

Հայց. Առաքելական եկեղեց-  
ւոյ մէջ կանոնագիտական հասկա-  
ցողութիւնը այն է որ կաթողիկոսը  
գերիվեր չէ ազգային-եկեղեցական  
ընդհանուր ժողովէն: Ազգային-  
եկեղեցական ժողովն է որ կ'ընտրէ  
կաթողիկոսը եւ ի հարկին կրնայ  
անոր հրաժարականը պահանջել:

Գրիգոր Թ. Մուսաբեկեանց  
կաթողիկոսը անփորձ եւ անտեղ-  
եակ անձ մը չէր անցուդարձերուն:  
«Ինք լաւ գիտեր թէ այլեւս Կիլիկ-  
իան կորսնցուցած էր իր քաղաքա-  
կան իշխանութիւնը, եւ ինքնին  
կորսուած էր կաթողիկոսներուն  
էջմիածինէն հեռու մնալը արդա-  
րացնող կուռանը» (Բ. Կ. Պտմ.  
Կաթողիկոսաց Կիլիկիոյ): Մուսա-  
բեկեանց կաթողիկոս գիտնալով  
արտօնեց ազգային-եկեղեցական ժո-  
ղովի գումարումը, եւ հաւանու-  
թիւնը յայտնեց նոր կաթողիկոսի  
ընտրութեան: Վիրապեցին իր ընտ-  
րութենէն յետոյ իր օրհնութիւննե-  
րը կը զրկէ Մուսաբեկեանցին եւ  
այս կը կատարէ միւսուրի օրհնու-  
թիւն: Մուսաբեկեանց de facto կը  
դառնայ հրաժարեալ, եւ կը մնայ  
որպէս պատուակալ կաթողիկոս Սի-  
սի՝ կ'ենթադրեմ, ուր տակաւին  
գոյութիւն ունէր բազմահազար հայ  
ժողովուրդ: Ազգային-եկեղեցական  
ժողովը, իր իրաւասութեամբ կը  
վերահաստատէ Վաղարշապատի  
Աթոռը մօտաւորապէս ինը դար  
աստանդական թափառումէ ետք:

Ի՞նչ հասկացողութեամբ եւ  
օրէնքի ի՞նչ տրամաբանութեամբ  
Միւստֆ Ծ.Վ. կը գրէ թէ գոյգ  
կաթողիկոսներ համահաւասար  
իրաւունքներ կ'ունենան: Հայ եկե-  
ղեցւոյ ո՞ր կանոնադրաւագիտա-  
կան ըմբռնումին մէջ գոյութիւն  
ունի համահաւասար կաթողիկոս-  
ներ կամ կաթողիկոսութիւն: Առա-  
ծը կ'ըսէ. «Խղճի եւ պատուոյ տէր  
անձերուն համար չէ որ յօրինուած  
է օրէնքը»: Հետեւաբար «Տարա-  
կոյս չկայ որ այդպիսի մարդիկ  
ստույգ պատմութենէ անտեղեակ,  
երեւոյթներով ոգեւորուող, պաշտ-  
պանելու կ'ելլեն պատմական սխալ  
բացատրութիւններով: Երկու հա-  
մահաւասար կաթողիկոսներ գո-  
յութիւն չեն կրնար ունենալ: Մի-  
ծաղելի է, որովհետեւ երկու համա-  
հաւասար հայ ժողովուրդ գոյու-  
թիւն չի կրնար ունենալ, որ աւելի  
ծիծաղելի է: Այդ իրաւունքը ան-  
ձինք իրենց անձերուն շնորհած  
վերջաբոյս կամ նորաբոյս տիտղոս  
մըն է, ինքնատեղեղ, օտար եւ  
անընդունելի, ազգային-եկեղեցա-  
կան շնորհաբաշխութեանց պար-  
գեններու ցանկէն: Մէկ է եկեղեցին,  
մէկ է հայ ժողովուրդը եւ մէկ է  
ամենայն հայոց կաթողիկոսու-

Շար.ը էջ 17

Authorized Broker



Blue Shield of California  
An Independent Member  
of the Blue Shield Association

SERVING SINCE 1975

# BEDROS S. MARONIAN

(818) 500-9585  
CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՂ



**ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ՈՍԿԵԱՅ ՅՈՐԲԵԼԵԱՆԸ**  
 «ՄՆԱՅ ՄԻՇՏ ԺՊԻՏՆԵՐՈՒ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ»



**Գ. ՄՈԼՈՑԵԱՆ**

Այս տարի Մշակույթի ամսուական մեծագույն միջոցառումներէն մին հանդիսացաւ սփիւռքահայ թատրոնի տաղանդաւոր աստղերէն՝ Գրիգոր Սաթամեանի թատերական վաստակի 50-ամեայ յոբելեանին նուիրուած շքեղ միջոցառումը: Արդարեւ, Կիրակի 30 Հոկտեմբեր, 2011, երեկոյեան ժամը 6:30ին, աւելի քան 600 թատերասէր հասարակութիւն մը փութացած էր փաստինայի Հ.Բ.Լ.Մ.ի կեդրոնը ներկայ ըլլալու հայ մշակույթի անխոնջ մշակի ոսկեայ յոբելեանին: Խուռներամ բազմութեան մէջ կը նշմարուէին Արեւմտեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք.ի ներկայացուցիչ՝ Գերշ. Տ. Պարեո Մ. Վրդ. Երէցեան, փաստինայի ոստիկանապետ Ֆիլիք Սանչես, Լոս Անճելըսի Քաղաքապետական Խորհուրդի անդամ Փոլ Գրիգորեան, Գալիֆորնիոյ

Խորհրդարանի անդամ Անթոնիո Փորթանթինո, ինչպէս նաեւ հայ մամուլի ու մշակույթի եւ հասարակական տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ: Գրիգոր Սաթամեանի մեծադիր նկարով զեղազարդուած բեմէն խօսք առնելով օրուան հանդիսավար՝ Հ.Բ.Լ.Մ.ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ Հայկ Մսրլեան, կազմակերպիչ Մարմնի անունով ողջունեց ներկաները եւ շնորհակալութիւն յայտնեց իրենց մասնակցութեան համար: Ապա նշեց Գրիգոր Սաթամեանի հետ իր ունեցած տասնեակ տարիներու գործակցութիւնը, շեշտը դնելով յոբելեարի բարեմասնութիւններուն վրայ:

Օրուան առաջին խօսք առնողն էր «Նոր Օր»ի նախկին խմբագիր եւ յոբելեարի թատերա-

Շար.ք էջ 18

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ՀԱՇՄԱՆԴԱՍ ԵՐԵՒԱՆԵՐՈՒՆ Ի ՆՊԱՍՏ 12-ՐԴ ԹԵԼԵԹՈՆԸ**  
 Խաւարին մէջ նախընտրելի է մոմ մը վառել, քան թէ անհիծել խաւարը



**ԽԱՉԻԿ ՃԱՆՈՑԵԱՆ**

Ինչպէս նախապէս յայտարարուած էր, Կիրակի, Հոկտեմբեր 9-ին եւ Կիրակի, Հոկտեմբերի 16-ին, մօտ 12 ժամ տեւողութեամբ, Լոս Անճելըսէն հեռարձակուող 380, 381 եւ 384 հեռուստատեսութեան կայաններէն տեղի ունեցաւ Հայաստանի ծնողագուրկ եւ հաշմանդամ երեխաներուն ի նպաստ տարեկան 12-րդ շէն ու շէնշող թելեթոնը: Այդ օր, բազմաթիւ արխիւններու, ֆիլմերու ցուցադրութեամբ, երգիչներու ելոյթներով, սրտաշարժ խօսքերով, Գլըմրիի հռչա-

Տոքթ. Արամ Գարաբաշեան, անուանի երգիչ Արմէնչիկ, Միացեալ Հայ Երիտասարդութեան նախագահ Յարութիւն Յարութիւնեան եւ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան եւ Նոր Սերունդ Մշակիթ. Միութեան «Կայծ» երիտասարդական բաժինների կողմից՝ Յարութ Տէր Դաւիթեան:

Իրենց կամաւոր, աշխոյժ հաղորդավարութեամբ թելեթոնին յաջողութեան աստարեցին՝ Թոմիկ Ալեքսանեան, Հովիկ Գաբրիէան, Ստեփան Յովակիմեան, Աբօ Նազարեան, Սարգիս Մաճառեան, Տոքթ. Վահան Ալաղադեան, յայտ-



Յ. Բալայեան եւ Տոքթ. Վահան Ալաղադեան՝ USC-ի շքանշանաւարտներուն հետ

կաւոր «Գոհար» երգչախումբի հրաշունչ երգերով պարզապէս հրաւորութիւն մըն էր որ տեղի ունեցաւ, խմբավարութեամբ Սեպուհ Աբգարեանի:

ԱՄՆ-ի, Գանատայի եւ Մեքսիկայի մէջ ապրող հայութիւնը հպարտութեամբ, միասնականութեամբ կը հետեւէր թելեթոնին, եւ ամէն անգամ որ մեծ գումար մը յայտարարուէր, հայրենակիցները հեռախօսազանգերով իրենց ուրախութիւնը կը յայտնէին:

ուսուցչուհիներ, աշակերտներ, ծնողներ, շրջանաւարտներ եւ շրջանաւարտ ծնողներ, որոնք բոլորն ալ մեծ եւ վարակիչ խանդավառութեամբ եւ եռանդով եկած էին: Այդօր Հայ Քոյրերու Վարժարանի շաբաթավերջի հանդարտ շրջափակը ստացած էր տօնական երեւոյթ, շրջանաւարտներով, որոնք իրար հետ կ'ողջագուրուէին, փոքրերով, որոնց աննախընթաց տրամադրութեամբ իրար մօտ հաւաքուած իրարու կը ծանօթացնէին իրենց ընկերակցող շնիկները, մինչ ծնողներ եւ ուսուցիչներ կը փորձէին իրենց մկանները արթնցնել, շրջանաւարտ DJ Շահան Գազանձեանի պարեղանակներու ներքեւ եւ

Շաբ.բ էջ 16

**ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

**ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 5-ԻՆ, ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7:00-ԻՆ, ԿԼԵՆՏԷՅԻԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ 222 E. Harvard Street, Glendale**

**Սիրով կը հրաւիրուի հայ հասարակութիւնը Հանդիսութեան աւարտին՝ հիւրասիրութիւն**



### ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԱԼԻՔՆԵՐԻ ՄԵՉ

#### ԶՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ

Վաղ մանկութիւնից ես անսահմանօրէն սիրել եմ ծովը: Իսկ եթէ աւելի ճշգրիտ՝ սիրել եմ ալիքները: Տանը գոնաւոր նկարագրողումներով մի մեծ գիրք ունէի: Դա պատերազմից առաջ էր: Ես դեռ կարողալ չգիտէի ո՛չ հայերէն, ո՛չ ռուսերէն: Բայց գիտէի, որ առաջին էջում պատկերուած մօրուքաւոր մարդուն կոչում են Այվագովսկի: Այո, կարողալ չէի կարողանում, բայց ջրաներկով հեշտօրէն արտանկարում էի: Պապիկս մի տեսր էր գնել ինձ համար, որի կազմին ինչ-որ բան էր գրուած: Նա գիտէր ռուսերէն տառերը եւ բարձրաձայն կարդաց. «Մատիտանկարների համար»: Ներկն էջերի վրայ տարածուած էր, բայց ես, միեւնոյնն է, շարունակում էի նկարել: Միայն նրա համար, որ նման լինէր ծովին, ալիքներին:

Ահա այդ ժամանակից ի վեր ալիքներն ինձ համար դարձան կենդանի հակներ, եւ նրանց հետ կարելի էր խօսել, զրուցել:

Մօտաւորապէս վեցերորդ-եօթերորդ դասարանում «Պիոներական պարավոյում» կարդալով ընդունելութեան մասին Նախիմովի անունան տրուած ծովային ուսումնարան, դիմում գրեցի: Չպատասխանեցին: Սակայն սէրը ծովի հանդէպ աճում էր ու աճում:

Պատերազմից չետոյ արդէն լաւ թղթեր յայտնուեցին: Առանձնապէս սիրում էի վատմանի թերթերը: Եւ միշտ հիմնականում նկարում էի ծով, ալիքներ: Աւարտեցի դպրոցը եւ անմիջապէս՝ Ռազմածովային ուսումնարան: Գլխումս ու սրտումս միայն ծովն էր: Միայն ալիքները:

Առաջին անգամ բաց ծով դուրս եկալ Կրոնշտադտից «Ուրալ» ականային արգելադիր նաւով 1954 թուականի ամբանը:

Երբ ծովախորշի դարպասներից անդին սկսուեց ճօճքը, ինձ թուաց, թէ երջանկութիւնից ցնորում եմ: Կախարդուած նայում էի ալիքներին, նրանց ինչ-որ անուններ տալով: Եւ հիմա էլ, երբ «Արմենիա» առաջատանաւր իմ երկրի պատմութեան մէջ առաջին անգամ աւարտում է շուրջերկրեայ նաւարկութիւն, իսկ ես պատրաստում եմ ամփոփիչ ճամբորդական նօթերը «Լիտերատուրնայա գազետայի» համար, դարձեալ մտածում եմ ալիքների մասին: Ծովերի եւ ովկիանոսների ողջ պոէզիան, ուսմանտիկան եւ դրաման առաջին հերթին ալիքներն են:

«Ալիքների մէջ». հենց այդպէս էր անուանել մեծ ծովանկարիչը իր ամենավառ կտաններից մէկը: Ալիքների մէջ մենք անցկացրինք երկու տարի, երկու ամիս եւ երկու օր: Այդքան տեւեց աշխարհաշուրջը:

\* \* \*

Ահա արդէն երեսունհինգ տարի ճամբորդում եմ Սփիւռքով (աշխարհում սփռուած հայ գաղթօճախներով) եւ չէի կարող ուշադրութիւն չդարձնել, որ արտերկրի մեր հայրենակիցների տներում աստուածաշնչեան Արարատ լեռան եւ էջմիածնի տաճարների նկարների կողքին պատերին փակցուած են նաեւ Յովհաննէս (Իվան) Այվագովսկու գլուխգործոցների կրկնօրինակները: Ոմանց մօտ՝ բնօրինակները: Բայց աւելի յաճախ կարելի էր տեսնել հանրաճանաչ

«Իններորդ ալիք», «Ալիքը», «Ալիքների մէջ» նկարները: Ահա արդէն աւելի քան հարիւր յիսուն տարի մարդիկ սրտի թրթիռով գնում են ոչ այնքան անսանձ մուստանգի պէս ծառացած ահուկի ալիքը, որքան ծովայիններին, որոնք կոտորուած կայմի վրայ չեն կըլում, չեն թաքնուած, այլ բարձր վեր մեկնած ձեռքով բացորոշ նայում են հսկայ ալիքին: Թուում է՝ մէկ ակնթարթ, եւ Արարատի պէս սպիտակ գագաթ ունեցող այդ ամբողջ լեռը կը փլուի եւ հօր հարուածով մարդկանց կը մխրճի ջրանդունդի յատակ, ինչպէս տախտակին խփուած մեխը՝ մուրճի հարուածից: Ես կարծում եմ, որ «Իններորդ ալիքը» հենց ակնթարթի յաւերժութեան մասին է, որտեղ մարդը՝ յանդիմանի նայելով մահուան դէմքին, չի կորցնում յոյսը, թուում է, անյուսալի իրավիճակում:

\* \* \*

Մենք հօ լաւ գիտենք, թէ ինչպիսին են լինում ալիքները: Աստիճանական ովկիանոսում, կանարեան կղզիներից անմիջապէս լետոյ, գիշերով ընկանք կատաղի ցիկլոնի մէջ: Յամընթաց մրրկալից քամու պայմաններում, բացարձակ խաւարում պէտք է հմտօրէն կրճատել առաջատարի մակերեսը, որպէսզի կայմը երեք տակ չծալուի: Եթէ ցերեկով նման դէպքերում հերթափոխողը դեռ կարող է վարպետօրէն խուսանաւել ահուկի ալիքների միջեւ, ապա գիշերով բարալիկ ու երկարաւուն մարզանաւը թռչում էր անտեսանելի ու գառիթափ սարի վրայ եւ թնդիւնով ընկնում խոր փոսը:

Չորս օր շարունակուեց այդ մղձականջը:

Ճօճքը: Յաւերժական վէճերը ինքը քեզ հետ, թէ արդեօք ո՞րն է աւելի վատ ու աւելի ծանր. նաւախելայի՞ն, թէ՞ կողային ճօճքը: Թերեւս գտայ ճիշտ պատասխանը: Մեզ համար աւելի սարսափելի, բայց եւ միաժամանակ նորմալ ու բնական է, երբ ճօճքն անընդմէջ է եւ երկարատեւ: Երբեմն թուում է, թէ ձգուելու է յաւերժօրէն: Յաճախ տպաւորութիւն է ստեղծուում, թէ նաւը քառասունհինգ աստիճանով դէպի ձախ է թեքուում եւ քառասունհինգ աստիճանով՝ դէպի աջ: Այն փաստը, որ անձնակազմում ոչ ոք ծովային հիւանդութեամբ չի տառապում, դեռեւս չի նշանակում, թէ ճօճքը հոգեմաշ չէ: Չիլի-



ից մինչեւ Ջատկի կղզի ընթացել ենք հենց այդպիսի կողային ճօճքով: Ձանձրացնում է ոչ միայն այն, որ օրը քսանչորս ժամ ճօճքը կտտանքի է ենթարկում քեզ: Այլ հարց կայ. յոյս ես տածում, թէ վաղը կամ վաղը չէ միւս օրը քամին կը մեղմանայ: Եւ յանկարծ եղանակի տեսութիւնից տեղեկանում ես, որ վաղը եւ վաղը չէ միւս օրը քամու արագութիւնը պոռթկումներով մեծանալու է մինչեւ մրրկայինի: Իսկ մինչեւ Ջատկի կղզի դեռեւս վեց օր կայ:

...Փոթորիկը շարունակուում է: Քամին համընթաց է: Մեծ առագաստը նաւը թեքում է մինչեւ ծայրագոյն սահման: Ուրախ ենք, որ արագութիւնը մեծ է: Բայց ապրել կողքի թեքուած՝ դժուար է:

\* \* \*

Անձնակազմն ինդոնեզիական վիզա չունէր: Աւաղ, ինդոնեզիայի առասպելական քանակի կղզիներից ոչ մէկում այսօր արդէն հայեր չկան: Իսկ 17-րդ դարի սկզբին նրանք հազար-հազարաւորներով Նախիջեւանից ու Իրանից, Հնդկաստանի վրայով, վերաբնակուել են Սոււմատրա եւ ձաւա կղզիներում: Շուտով կառուցուել են եկեղեցիներ, բացուել դպրոցներ եւ մշակութային հաստատութիւններ: Առաջին եկեղեցին կառուցել են Ջակարտայում, վերջինը՝ Սուրաբայա նաւահանգստային քաղաքում: Բայց նախապատրաստուելով գիտարշակին, ես արդէն գիտէի, որ ինդոնեզիայում ոչ մի եկեղեցի չի մնացել: Յաւօք, երկրի մայրաքաղաքում քանդել են Սուրբ Յովհաննէս հայ առաքելական եկեղեցին:

Խօսքը վանդալիզմի մասին չէ, պարզապէս եկեղեցին ընկել էր գլխաւոր նախագծի տակ:

Մի խօսքով, այդ ամէնն իմանալով, մենք ինդոնեզիայի վիզաներ չձեւակերպեցինք, որոշելով շրջանցել ձաւան եւ Սոււմատրան:

Սակայն ճակատագիրն այլ կերպ տնօրինեց: Նրան հաճոյ էր, որ Սիդնէյում ես հանդիպեմ ինստուտամեայ Մարթա Աբգար մօրաքրոջը, որն էլ փոխեց «Արմենիայի» երթուղին: Նրանից ոչ միայն լսեցի Սուրաբայայի եկեղեցու մասին, այլեւ տեսալուսանկարը: Ես բացականչեցի. «Նշանակում է՝ ո՞ղջ է նա, եկեղեցին»: Մօրաքոյր Մարթան պատասխանեց ժպտալով. «Ողջ է, իհարկէ, ողջ է»: Եւ աւելացրեց. «Ընդամէնը երկու տարի առաջ է որդիս ինձ տարել այդ քաղաքը, որտեղ ծնուել եմ: Ես եղել եմ այդ եկեղեցում, որտեղ պսակադրուել էինք»:

Եթէ իմանալ սուրբ Գէորգը, թէ ինչ դժուարութիւններ կրեց «Արմենիան» Սիդնէյից յետոյ, կտրելով մեծ թուով ծովեր, խութեր, նեղուցներ՝ անթիւ-անհամար կղզիների մօտով անցնելով: Ահա դրանցից ընդամէնը մի քանիսը. Կորալեան ծով, Մեծ Պատուարային խութ, Թորեսի նեղուց, Արաֆուրեան ծով, Բանդի ծով, Ֆլորես ծով: Բայց աւելի դժուար էր լուծել վիզաների խնդիրը: Օգնեց Հնդկաստանում եւ ինդոնեզիայում Հայաստանի դեսպան Արա Յակոբեանը: Իմանալով, որ Ջակարտայի ամերիկեան դեսպանատանը որպէս փոխհիւպատոս է աշխատում հայագրի Պետրոս Դաւիթեանը, նա կապուեց իր գործընկերոջ հետ: Եւ անիւր պատուեց: Ի լրումն պարզուեց, որ փոխհիւպատոսի կինը՝ Հուրիսիմէն, նոյնպէս ծնունդով Հա-

Մար.ք էջ 19

<p>ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄ</p>	<p>ST. GREGORY ARMENIAN CHURCH <b>Geragos</b> BANQUET HALL OF PASADENA</p>	<p><b>NEWLY REMODELED</b></p>
	<p><b>Now ready to host your</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Wedding</li> <li>• Baptism</li> <li>• Anniversaries</li> <li>• All other happy &amp; sad events.</li> <li>• Բարսանիք</li> <li>• Մկրտութիւն</li> <li>• Տարեդարձ</li> <li>• և ամէն ուրախ ու տխուր առիթներ:</li> </ul>	
<p><b>ՎԱՌԷ 562-715-8730 ՎԱՌԷ</b></p>		
<p><b>Լաւագոյն և յարմարագոյն գիներով ձեզ կ'սպասարկենք</b></p>		



# Telethon 2011

November 24

**Thanksgiving Day**  
8am – 8pm PST

Watch the 12 hour live webcast from anywhere in the world at [www.ArmeniaFund.org](http://www.ArmeniaFund.org)



ARMENIA FUND TELETHON 2011



A GIFT OF | A GIFT OF  
**WATER | LIFE**

Text **Armenia** to

**50555**

donate **\$10 TODAY!**

\$10.00 donation to Armenia Fund. Charges will appear on your wireless bill, or be deducted from your prepaid balance. All purchases must be authorized by account holder. Message and Data Rates May Apply. Text STOP to 50555 to STOP. Text HELP to 50555 for HELP. Full Terms: [www.mGive.org/T](http://www.mGive.org/T)



**CHECK YOUR LOCAL TV LISTINGS**

City-State-Region	Station	Digital Ch.	Cable Channel	Satellite	Time
<b>Central California</b> Fresno & Central California	<b>KGMC</b> Channel 43	43.1	<b>COMCAST Channel 10</b> <b>AT&amp;T U-VERSE Channel 43</b>	<b>DISH 43</b>	8am-8pm PST
<b>Northern California</b> San Francisco & Bay Area	<b>KTSF</b> Channel 26	26.1	<b>COMCAST Channel 8</b> <b>AT&amp;T U-VERSE C Channel 8</b>	<b>DIRECTV 26 or 893</b> <b>DISH 26 or 8237</b>	8am-7pm PST
<b>Southern California</b> Greater Los Angeles Area	<b>KSCI</b> Channel 18	18.1	<b>ALL CABLE SYSTEMS Channel 18</b> <b>AT&amp;T U-VERSE Channel 18</b> <b>VERIZON FIOS Channel 18</b>	<b>DIRECTV 18</b> <b>DISH 18</b>	8am-8pm PST

For **East Coast** broadcast coverage, please visit [www.ArmeniaFund.org](http://www.ArmeniaFund.org)

### ՄՏԱՆՈՎՈՒԹԻՒՆ

Մտահոգությունը շատ սովորական հարց մըն է եւ մարդիկ երբեմն կը մտահոգուին. պատանին երբ առաջին հանդիպումը կ'ունենայ հակառակ սեռի պատկանող անձի մը հետ, չափահասը երբ ժողովուրդին հետ տեսակցութիւն կ'ունենայ, բժշկութիւն ուսանողը երբ առաջին առանձին վիրաբուժութիւնը կատարէ, աշակերտը երբ քննութեան հարցարանը ստանայ: Այս բոլորը մտահոգութեան բնական աղբիւրներն են եւ այս պարագաներուն այդ նոյնիսկ օգտակար կը համարուի, որովհետեւ այդ մեզի կը մղէ ինդիւրներու պատրաստուելու եւ անոնց հետ վերաբերելու: Այն անձը, որ մտահոգութիւն չի գար, ձախողութեան վտանգին կ'ենթարկուի:

Երբ մտահոգությունը գորաւոր ըլլայ եւ շարունակէ անձին հետ մնալ ամիսներով ու տարիներով, տիրապետելով անոր մտածումներուն վրայ, այս պարագային այդ կը կոչուի հիւանդագին մտահոգութիւն (pathological anxiety), երբ անձին վրայ կ'իշխեն մտածումներ ու երեւակայութիւններ, որոնց պատճառով ան կը կարծէ, թէ վտանգ մը կը սպառնայ իրեն: Այս մէկը մտահոգութեան հիւանդութիւնն է: Այս տեսակի մտահոգութեան որպէս արդիւնք, անհատը ընդհանուր եւ ծածուկ վախ կը գզգզ ապագայէն: Այս գզգզումը ընդհանրապէս կ'ազդէ անոր մտածելակերպին ու կեդրոնացման վրայ, հետեւաբար, գինք ջղաջին եւ լարուած դարձնելով:

Այս տեսակի մտահոգությունը ներքին է, առանց այդ մտավախութեանց յատակ պատճառ ըլլալու: Այս վիճակը առանձնապատուկ պատճառ չունի, սակայն կենսաբանական, ժառանգական, միջոցառարարական ու ընկերային գործոններ կրնան ազդեցութիւն ունենալ: Կարգ մը մարդիկ, իրենց ժառանգական-կենսաբանական կազմուածքին պատճառով հակամէտ կ'ըլլան (ուրիշներէն աւելի) այս հիւանդութեամբ տառապելու:

Բացառապէս իրականութիւն մըն է, թէ միջոցառարարական ու ընկերային գործոնները գլխաւոր դեր կը խաղան մտահոգութեան ու անապահովութեան զգացումը աւելցնելու: Ծնողքին կողմէ ցուցաբերուած աւելորդ հովանաւորութիւնը պատճառ կը դառնայ պզտիկին մօտ մտահոգ անհատականութիւն մը յառաջացնելու:

Այս պարագան ունեցողներուն բուժումը կարելի է ամէնէն առաջ այդ անձին մտածելակերպը փոխելով, որովհետեւ այդ անձը անկասկած կը տառապի մտածելաձեւէ մը, որ գինք հեռու կը պահէ իրականութենէն եւ գինք կը մղէ ընկղմելու արդարացում չունեցող տիրութեան մէջ: Հետեւաբար, առաջին քայլը պէտք է ըլլայ, որ այս անձը պարզութեամբ նայի ու մօտենայ հարցերուն, եւ ոչ թէ կարգ մը վնասներու հաւանականութիւն ունեցող հարցերուն նայի որպէս իս-

կական վտանգաւոր դիրք:

Այդ անձը պէտք է նաեւ չմտահոգուի հեռու ապագայով, ինչպէս նաեւ ան պէտք չէ ներկայ ժամանակը թունաւորել հեռու եւ տիրեցուցիչ մտածումներով ու զաղափարներով: Հետեւաբար, հարկ է մեր կեանքը լեցնել հետաքրքրական գործունէութիւններով:

Երբ անձ մը չ'աշխատիր, իր ուղեղը կը թեքի իր մտահոգութիւններուն մասին մտածելու: Թերեւս այս կէտին ամէնէն յարմար օրինակը կը հանդիսանայ Ուիլսթրն Չըրչըլին խօսքը: Չըրչըլը, որ օրական 18 ժամեր կ'աշխատէր պատերազմին ընթացքին, երբ իրեն հարցում ուղղած են, թէ արդեօք ինք մտահոգ է, ան պատասխանած է հետեւեալ ձևով. «Ես շատ զբաղած եմ եւ մտահոգուելու ժամանակ չունիմ»:

Մտահոգ անձը երանի յիշէ, թէ այդ մտահոգուելիք հարցերը որոշ տոկոս համեմատութեամբ կրնան չափատահիլ եւ երանի ան ինքզինքին հարց տայ, թէ ի՞նչ են իր մտահոգութեան իսկական ու համոզիչ պատճառները: Արդարեւ, ան պէտք է նայի իր առջեւ գտնուող եւ յատակ եղող բաներուն, եւ ոչ թէ նայի միջոցութեան ու անյայտութեան մէջ գտնուող բաներուն: Մտահոգ եղող անձը պէտք է գիտակցի այն իրականութեան, թէ երբեմն մենք բոլորս ենթակայ կ'ըլլանք նեղացուցիչ պարագաներու, երբ անկարող կ'ըլլանք գանոնք փոփոխութեան ենթարկելու եւ ստիպուած կ'ըլլանք գանոնք ընդունելու: Սակայն այս չի նշանակեր, թէ պէտք է յանձնուիլ, այլ պէտք է յարատեւ աշխատանք տանիլ այդ պարագաները դիմակալելու եւ փոխելու, կամ ընդունիլ գանոնք որպէս իրականութիւն, եւ այս մէկը աշխարհին վերջը ըլլալ չի նշանակեր:

Ամէնէն յարմար եւ դիւրին բուժումը կը կայանայ ինքզինք այս մտահոգութեան հարցով չկորսնցնելուն մէջ: Պատասխան հարցերով մտահոգուիլը անօգուտ է. սակայն այս չի նշանակեր, թէ բոլոր հարցերը իրար վրայ պիտի հաւաքուին, որովհետեւ հարկ է, որ վաղը նոր ծագելիք արեւը իր հետ բերէ նորանոր յոյսեր:

Բոլորս ալ մտահոգութենէ կը տառապինք, սակայն հիւանդագին մտահոգութեան գոհ եղողները ուրիշներէն աւելի կը տառապին: Եթէ բնական մտահոգությունը որոշ չափով օգտակար է, հիւանդագին յարատեւ մտահոգությունը կրնայ տապալել ենթակային կեանքի վայրկեանները եւ անոր առիթ չտալ այլ մարդոց նման ապրելու: «Կեանքը յարատեւ ժպիտ ու արցունք է: Արտասուքը յաճախ կը փորձէ թափանցել սրտիդ խորքը մարելու կեանքիդ ուրախ շողերը: Բայց չփակես սիրտդ ու մոռնաս կամքդ: Յիշէ՛, յիշէ՛, թէ ամէն մայրամուտէ ետք... վերատին կը ծնի վաղուան արեւը»:

### ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

Գոյութիւն ունին որոշ զաղտնիքներ, զորս երջանիկ ամուսնութեան իւրաքանչիւր կողմը կը բաժնեկցի ներդաշնակութեան հովանիին տակ: Ծանօթանանք այդ զաղտնիքներուն, որոնցմէ մին (կամ աւելին) կրնայ փրկել ձեր շարաբերութիւնը, եթէ ձանձրոյթը կամ յոգնութիւնը սկսած է մուտք գործել անոր պատերէն ներս:

Իր «5 Simple Steps To Take Your Marriage From Good To Great» նոր գիրքին մէջ տքթ. Օրպորթ կը բացատրէ այս զաղտնիքներուն կամ սովորութիւններուն մասին, ինչպէս ինք կ'անուանէ եւ որոնք հինգ հատ են:

Հոս հարկ է նշել ասոնց արժէքաւոր արդիւնքներուն կարելի եղած է հասնիլ հարիւրաւոր ամուսնեակ պարագաները սերտելէ ետք, անցնող 23 տարիներու ընթացքին:

1) Առաջին սովորութիւնը.

Երկրորդ անձը անկեղծօրէն գովել եւ այս բարի սովորութիւնը հարկ է որդեգրել անոր հետ վերաբերմունքին մէջ: Այսպիսով տարիներու ընթացքին զոյգերը միացնող դրական կէտերը կը բազմապատկուին: Այս ուսումնասիրութեան մէջ ուրախ գոյգերու 61 առ հարիւրը յայտնած է, թէ իրենց երկրորդ կէտը իրենց կուտայ իրենք անձին հանդէպ ուրախութիւն եւ հանգստութիւն, հակառակ այն գոյգերուն, որոնք նուազ բախտաւոր եւ չաջող են իրենց ընտանեկան կեանքին մէջ:

2) Երկրորդ սովորութիւնը.

Սեռային լաւ կեանքը մը

ունենալու վրայ կեդրոնացում, որակի եւ ոչ թէ քանակի իմաստով: Ուրախ ամուսնեակ չորսէն երեքը սեռային առումով բաւարարութիւն կը գգան իրենց կեանքի ընկերոջ հետ, թէ կուզ անոնց միջեւ իրաբանութիւնը յետադիմած է տարիքի եւ տարիներու պատճառով:

3) Երրորդ սովորութիւնը.

Երկրորդ անձին հանդէպ վստահութիւնն ու հաւատքը, այսինքն՝ անհատը պէտք է վճռակամօրէն խորհի, թէ իր կողակիցը անկարելի է, որ գինք վիրաւորէ կամ յուսախաբ ընէ (այս մէկը ըստ կիներու 96 առ հարիւրին եւ տղամարդոց 92 առ հարիւրին):

4) Չորրորդ սովորութիւնը.

Կողակիցիդ անձին եւ իւրապատկութեան լաւ եւ յարատեւօրէն ծանօթանալ: Այս կէտը 100 առ հարիւր նիշ ստացած է, որովհետեւ յաջող գոյգերուն բոլորը յայտնած են, թէ իրենց կողակիցին հանդէպ խոր հասկացողութիւն ունին եւ գինք լաւ կերպով կ'ընթանան: Ոչ թէ անոր կարգ մը ճաշակներն ու մակերեսային հակումները, այլ անոնք շատ լաւ կը գիտակցին իրենց կողակիցը ուրախ պահող եւ գինք իւրապատուկ գզգզող կէտերուն:

5) Հինգերորդ սովորութիւնը.

Կանոնաւոր կերպով զաղտնիքները յայտնել եւ ունեցած իսկական գզգզումները արտայայտել, ինչ որ իրենց մօտ կ'ամրապնդէ գզգզական ջերմութիւնը: Այս օրէնքը ճիշդ է ըստ ուսումնասիրութեան մասնկցած կէտին:

### ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԲԱՅԼԱՐՇԱԼԸ

Շարունակուած էջ 13-էն

վարժարանիս մարդիչ ժանէթ Փանտեանի նախամարզական հաւաքական փորձերով, ապա աշակերտական հաւաքական աղօթքով խոժըրը յառաջացաւ դէպի մօտակայ գբօսայգին, ուր դիմաւորուեցան նախօրօք պատրաստուած հաճելի նախաճաշով՝ հայկական խմորեղէններով, սուրճով, զովացուցիչով եւ պտուղներով, որոնք բոլորն ալ մատուցուած էին վարժարանիս ծնողներու կողմէ: Հանգստանալու պահուն եւ ընկերային գեղեցիկ միջոցառումին մէջ Տիկ. Նարիս Խալիթեան Պէթէլ չաչտարարեց առաջին երեք հանգանակիչներու անունները, առաջին՝ Սերակ եւ Սէյրի Գարեան ընտանիք հանգանակած են 6,025 տոլար, երկրորդ՝ Օլիվիա Քալինճեան ընտանիք՝ 4,985 տոլար եւ երրորդ՝ Կալիա եւ Սերժ Օտապաշեան ընտանիք 4,644 տոլար որոնք առ ի գնահատանք արժանացան, «Այ բատ»ի: Ապա մասնակիցները յաղթական վերադարձան դէպի վարժարան, ամբողջացնելով 4 մղոնը եւ հարստացնելով իրենց յիշատակներու միջերանոցը նոր եւ հաճելի դէպքերով: Իրականութիւն է որ հայ կրթօճախները եղած են սփիւռքի հայա-

պահպանման կեդրոնները նաեւ իրականութիւն է որ այդ դպրոցները դարձած են մեր ժողովուրդի գուրգուրանքին առարկան գայն դարձնելով իր ամէնօրեայ մտածումներուն մէջ առկայ եւ աշխատելով գայն հասցնելու կատարելութեան:

Այս էր դրդապատճառը այս հանգանակային քայլարշաւին, որուն միջոցաւ նաեւ առիթ ստեղծուեցաւ բոլոր անոնց որոնք կը հաւատան հայ կրթօճախներուն վերապահուած հայապահպանման դերակատարութեան, իրենց լուծման ձգելու Հայ Քոյրերու վարժարանի վերելքին ծառայող գանձանակին, որպէսզի բոլորն արժանանան իրենց վարժարանի յաղթական երթին:

15 Հոկտեմբեր 2011ին ժամը 9ին սկիզբ առած արշաւը նոյն օրը կէսօրին վերջ գտաւ...

16 Սեպտեմբեր 2011ի սկսած հանգանակութիւնը տակաւին կը շարունակուի մինչեւ 16 Յունուար 2012 հայ դպրոցի առաքելութեան եւ հայակերտման աշխատանքին հաւատացողներ կրնան այցելել հետեւեալ կայքէջը եւ նուիրաբերել ի սէր Հայ սերունդներու հայեցի դաստիարակութեան:

<http://www.firstgiving.com/asamontrose/fundraisers/4>

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**  
 Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք գանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝  
 հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
 G.Y.O.  
 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

**ՔԱՉՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
**Ամէն Կիրակի երեկոյեան**  
**Ժամը 10:00-ից 12:30**  
**Կլէմսէյի 380-րդ կայանից**



# ՎԱՂԱՐՇԱՊԱՏԵՆ՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Մարտնակուած էջ 6-էն

Թիւրք: Այս յօդուածը գրին է վրիպած ճիգի մը: Սահակ կաթողիկոս խապայեան իր առաջին կոնդակին մէջ այսպէս կը գրէ. «Կ'աղաչեմ զձեզ, վարդապետք եկեղեցւոյ, որ ի ձեռնադրութենէ ընկալեալ շնորհօք Ս. Հոգւոյն ուսուցիչք էք բանին ճշմարտութեան»:

Ճիշդ չէ նսեմացնել ամենայն հայոց հայրապետներու իրաւասութիւնը: «Ամենայն հայոց հայրապետութեան ոյժը, ամէն բանէ աւելի հոգեկան ոյժի գերագոյն կառուցն է, ան Լուսաւորչի ոյժն է»:

Ինչ կը վերաբերի Կիլիկիոյ Աթոռին աստանդական վիճակին, Կիլիկիոյ պարպումէն ետք Յեղասպանութենէն ազատած եկեղեցականները եւ հայ ժողովուրդը Սահակ խապայեան կաթողիկոսի գլխաւորութեամբ կու գան հաստատուելու Երուսաղէմ, ապա Հալէպ եւ հուսկ Պէյրութ: Վիճակը ողբալի էր եւ ցաւալի: Ճակատագիրը անգութ եղաւ մեր ժողովուրդին:

Ճգնաժամային այդ պահուն փրկութեան եւ օգնութեան իրենց անվերապահ աջակցութիւնն եւ օժանդակութիւնը կ'ընձեռեն Ամենայն հայոց հայրապետ Գեորգ Ե., էջմիածին, եւ Երուսաղէմի Ամեն. պատրիարք Եղիշէ արք. Գուրգէն, զաղափարակից ունենալով Թորոս արք. Գուրգէն, ապագային պատրիարք Երուսաղէմի, Բաբելէն արք. Կիւլէսերեան, յետագային աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Այո, Կիլիկիոյ Աթոռը պանդուխտ էր եւ զայն պէտք էր փրկել:

Այս մեծանուն եկեղեցականները իրենց մտքերէն երբեւիցէ չանցուցին «վերջին հարուածը տալ» Կիլիկիոյ պատմականացած Աթոռին, այլ ջանացին հոգեւորոգելու գանձք ի գին ամէն զոհողութեանց: Նոյնիսկ, հայրապետական հրամանով եւ տնօրինութեամբ՝ Պէյրութի եւ Դամասկոսի թեմերը յանձնելով Սահակ կաթողիկոսին: Արդեօք այս չէ՞ իմաստը միութեան ոգիին եւ եղբայրակցութեան, թէկուզ որ Մայր Աթոռը կը գտնուէր համայնավար երկրի մէջ, բայց այդ երբեք արգելք չկրցաւ դառնալ նոր հրամայականին առջեւ, փրկել մեր ժողովուրդը, փրկել Կիլիկեան Աթոռը: Ինչ համբուրելի խղճմտանք: Այս է իրական ազգային միութեան ոգին, այս է եկեղեցւոյ հասկացողութիւնը եւ այս է Քրիստոսի եկեղեցին:

Ճիշդ այդ ոգիէն մղուած ես չեմ հասկնար եւ չեմ ընդունիր Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ թեմերու գրաւումը, ինչ որ ալ ըլլան պատճառները:

Այս բոլորը կ'ըսենք, կրկնելով եւ շեշտելով թէ եկեղեցական, իրաւական, կանոնադրական տեսակէտը այն է թէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը որ մաս կը կազմէ Հայց. Եկեղեցւոյ, պարզապէս կը մնայ մասնակի Աթոռ մը, ենթակայ ամենայն հայոց կաթողիկոսութեան ի հոգեւոր, անկախ ըլլալով վարչական եւ մատակարարական գործունէութեանց մէջ:

Ինչ սխալ բան կայ ասոր մէջ: Ենթակայութիւն: Ըստ իս՝ ոչ: Համերաշխութիւն եւ կարգա-

պահութիւն միայն: Այս է հասկացողութիւնը եկեղեցւոյ ամբողջականութեան, միութեան եւ անոր նուիրապետական կարգին եւ օրէնքին:

Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռը գրեթէ համերաշխութեան ոգին եւ ժամանակը ցոյց տուաւ որ նուիրապետական աթոռները պարզապէս օգտագործուեցան: Թեմերը գրաւուեցան այն առարկութեամբ թէ անոնք «անմխիթար» վիճակի մէջ կը գտնուէին: Յատակ էր, որ յայտնի եւ մութ ձեռքեր՝ այդ գործին ետեւն էին: Պէտք է յաջողցնէին Կիլիկիոյ Աթոռը իրենց հակակշիռ տակ առնել եւ կուսակցականացնել եւ հակադրել ամենայն հայոց հայրապետութեան: Այդպէս ալ եղաւ ցայսօր բանիւ եւ գործով: Թորոս Գուրգէնի արտայայտուէր. «Ինչ թոյլ կու տամ ըսելու թէ ձեր խղճմտանքը նոյն ինքն պէտք է գլխովին ըմբոստանայ այդպիսի մտածումի մը դէմ»:

1916 Մայիս Երուսաղէմ: Սահակ կաթողիկոս հոն պանդխտացեալ եւ աքսորեալ էր եւ կը մնար հայոց վանքին մէջ: Ճեմալ փաշա այցելութեամբ կը գտնուէր Երուսաղէմ, եւ իր գրասենեակին մէջ ուր հրաւիրուած էր Սահակ կաթողիկոս խօսքը ուղղելով իրեն կ'ըսէր. «Մենք չենք ուզեր որ մեր թշնամիին հպատակ եղող կաթողիկոս մը մեր տէրութեան սահմաններուն մէջ ապրող հայերուն հոգեւոր պետը ըլլայ...» եւն: Սահակ կաթողիկոս կը վերադառնայ հայոց վանք ընկճուած եւ ցնցուած: Եւ կ'ըսէ իր իրաբաններուն, Նոյնիսկ Շահ Աբբաս այս տեսակ ճիւղային դադար մը չյղացաւ, հայ ժողովուրդը անջատել էջմիածինէն: Թուրքերը տակաւին չեն կրցած հասկնալ հայ ժողովուրդին մտայնութիւնը: Հայ ժողովուրդին՝ հանդէպ էջմիածնի ունեցած պաշտումը»:

Պարսկաստանի եւ Յունաստանի թեմերը չունէին այն «անմխիթար» իրավիճակը որ իբր թէ կը տիրէր Միացեալ Նահանգներու մէջ: Ինչո՞ւ անոնք ալ բաժնուեցան էջմիածինէն: Իրանի եւ կամ Նոր Զուղայի պատմական թեմը չորս հարիւր եւ աւելի տարիներ հաւատարմութեամբ միացած եւ մնացած էին ամենայն հայոց հայրապետութեան իրաւասութեան ներքեւ եւ կարեւոր մէկ մասը կը կազմէին ամենայն հայոց հայրապետութեան թեմական կառուցին: Ինչպէ՞ս յանկարծակի 1958ին թեմը կ'անցնի Անթիլիասի հովանաւորութեան, նոյնը Յունաստանի պարագային: Պատճառը արտասահմանի եկեղեցիները Անթիլիասի Աթոռի գլխաւորութեամբ հակադրել էջմիածնի եւ անոր միջոցաւ հայրենիքի: Այն իրաւունքները եւ յարաբերութեանց սահմանները որոնք ճշդուած էին 1652ին Երուսաղէմի ժողովին մէջ Ներսէս Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի եւ Փիլիպոս ամենայն հայոց կաթողիկոսի ներկայութեան, բոլորն ալ ջուրը թափուեցան՝ առանց խղճահարութեան: Կ'ուզեմ հոս պատմական փակագիծ մը բանալ: 1930ական թուականներուն յաճախակի այցելութիւններով Երուսաղէմ կու գար Գահիրէէն Արշակ Զա-մալեան (դաշնակցական կու-

սակցական գործիչ եւ նախկին նախարար Հայաստանի հանրապետութեան) խորհրդակցելու եւ ռազմավարելու նպատակով, որ Երուսաղէմի մէջ հիմնուի հակաթու կաթողիկոսութիւն մը յանձինս Թորոս պատրիարք Գուրգէնի: Արթուրն էին հայոց հայրապետները: Արթուրն էին Երուսաղէմի եկեղեցականները: Տեսան վտանգը այդ առաջարկին, եւ մերժեցին զայն: Յարգանք իրենց որովհետեւ չդաւեցին իրենց կոչումին, բան մը որուն մէջ յետագային Անթիլիասի Աթոռը թերացաւ եւ զոհ գնաց այդ անխոհեմ քաղաքականութեան:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մեծութիւնը եւ փառքը թեմեր գրաւելու մէջ չէ: Իր մեծութիւնը, հոգ չէ թէ տեղական կամ մասնակի կաթողիկոսութիւն ըլլայ, իր գործին ազնուականութեան եւ առաքելութեան մէջն է: Իր փառքը եւ մեծութիւնը եւ կարեւորութիւնը իր հաւատքին, յոյսին, սրտին, ստեղծագործ գորութեան եւ հոգեւոր եւ մշակութային կենսունակութեան մէջ պէտք է ըլլայ: Այս է իր նուիրական պարտականութիւնը եւ ոչ թէ անիմաստ մրցակցութիւնը: Ինչն է վնասը եթէ թեմը եւ կամ թեմերը կը պատկանին ամենայն հայոց հայրապետութեան, ինչ որ է պատմականօրէն: Արդեօք ամենայն հայոց հայրապետութիւնը օտար եկեղեցի մըն է եւ կամ օտար դաւանանք, քաւ լիցի: Եթէ UNITY IN DIVERSITY այդ ըսել է, որպէս արդարացուցիչ տեսակէտ, կը ցաւիմ այդ տկար տրամաբանութեան վրայ: Անթիլիասը լրացուցիչ մէկ մասն է ամենայն հայոց հայրապետութեան: Կը հաւատամ որ Մեծն Տանն Կիլիկիոյ արժանաւոր եկեղեցականներ կրնան եւ պէտք է ծառայեն ամենայն հայոց հայրապետութեան թեմերէն ներս: Այդ է մեր եկեղեցւոյ իսկական միութեան ոգին, պայմանաւ որ եկեղեցւոյ միասնականութիւնը եւ ամբողջականութիւնը եւ անոր նուիրապետութիւնը յարգուի օրէնքով եւ գործով:

Ինչ հարկ եւ պատճառ կայ եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին երկու տարբեր ներկայացուցիչներով ներկայանալ:

Չէ որ մէկ է մեր եկեղեցին եւ անբաժան: Ամօթ չէ՞ մեզի: Ո՞ւր է գիշորութեան ոգին: Ես երբեք հարց պիտի չունենամ եթէ Արամ կաթողիկոս ինքը ներկայանար եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին որպէս գլխաւոր ներկայացուցիչը ամենայն հայոց հայրապետութեան: Արդեօք այդ ընելով նսեմացու՞մն է Կիլիկիոյ Աթոռի հեղինակութեան, եւ կամ իր անձին: Ընդհակառակը, այդ գորութիւնն է մեր եկեղեցւոյ միասնականութեան:

Արամ կաթողիկոս իր Գալիֆորնիա այցելութեան ընթացքին յաճախ կ'արտայայտուէր, թէ հայ եկեղեցին մէկ է, հայ ժողովուրդը մէկ է եւ հայ եկեղեցին չէ բաժնուած: Սակայն «Բաւական չէ համոզուած ըլլալ ճշմարտութեան, այլ պէտք է տիրապետուիլ ճշմարտութեան» (Եղիվարդ):

Կը յիշեմ հանգուցեալ Գարեգին Ա. Կաթողիկոսին խօսքը որ մինչեւ հիմա ականջիս մէջն է երբ հայրապետական այցելութեամբ կը գտնուէր Տիգրայթ, Ամերիկա, ուր ես հովիւն էի, եւ հիւրընկալը, Ռիթթ Գարլիթըն հոթէլի իր սենեակին մէջ հանգուցեալ Մեսրոպ Արք. Աշճեանին ուղղելով իր խօսքը, բարձրաձայն եւ բարկացոտ կ'ըսէր. 'Գնա', ըսէ՛ բարեկամներուդ, ինչո՞ւ չեն ուզեր միանալ, հիմա Հայաստանը անկախացած է, ժամանակին՝ ես ալ կը պայքարէի այդ զաղափարին դէմ, այսօր ինչ արդարացում կայ, ինչո՞ւ գնա՛, ըսէ՛ քու բարեկամներուդ»:

Մենք կը սիրենք Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը: Իր մեծութիւնը եւ փառքը համահաւասար ըլլալու մէջը չէ: Իր մեծութիւնը եւ փառքը թեմերը գրաւելու մէջը չէ: Իր մեծութիւնը եւ փառքը Ս. էջմիածինը գորացնելու մէջն է: Էջմիածնի գորացումը իր ալ գորացումն է, անոր տկարացումը իր ալ տկարացումն է:

Հայ ժողովուրդը չընդունիր որեւէ այլ կերպ: Եւ ձանձրացած է ներկայ կացութենէն: Մի կարծէք որ մեր ժողովուրդը գուրկ է գայրանալու զգացումէն: Զայրոյթը՝ իր հոգիին մէջն է: Կրակը հոն է: Զգուշացէ՛ք անոր բոցավառութիւնը:

## ՄԱՍԻՍ

### ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

### ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆԻ ՅՈՒԲԵԼԵԱՆԸ

Շարունակում է 7-էն

խումբի երբեմնի անդամներին Սարգիս Մինասեան: Ան առանձնապէս անդրադարձաւ Գրիգոր Սաթամեանի թատերական ասպարէզին ներկայատարած օգտաշատ ներդրումներուն մասին: Անուրանալի է իր թանկագին աջակցութիւնը հայապահպանման գործին մէջ: Յորեկեարի կենսագրութիւնը հարուստ է հայ եւ օտար բեմերու եւ շարժանկարներու մէջ իր բերած մասնակցութիւններով ու թարգմանական աշխատանքներով, ինչպէս նաեւ՝ գրարթագրական մենակատարութիւններով:

Լոնտոնահայ ծանօթ անձնաւորութիւններէն եւ Գրիգոր Սաթամեանի նախկին գործակիցներէն՝ Ասատուր Կիլգէլեան, իր ելոյթի մէջ նախ պատմական ակնարկ մը նետեց հայ թատրոնի շուրջ երկու հազար տարուան պատմութեան վրայ, ապա գնահատանքով անդրադարձաւ յորեկեարի 50-ամեայ բեղուն գործունէութեան մասին: Ա. Կիլգէլեան առանձնապէս շեշտեց. «Մեր թատրոնի գործիչ-



րանական Անթոնիօ Փորթանթինսօ եւ Լոս Անճելըսի Քաղաքապետութեան անդամ Փոլ Գրիգորեան: Շնորհաւորական գրութիւն մը դրկած էր Հ.Բ.Լ.Մ.ի նախագահ Պերճ Սեդրակեանը: Ողջոյնի գրութիւններ առաքած էին նաեւ բազմաթիւ այլ անձնաւորութիւններ:

Յորեկեար Գրիգոր Սաթամեանը յուշանուէրներով պարգեւատրեցին Հ.Բ.Լ.Մ.ի Շրջանակային Յանձնաժողովն ու «Արտաւազ» թատերախումբը: Հայաստանի մշակույթի նախարարութիւնը գինք պարգեւատրեց ոսկեմետալով, իսկ Սփիւռքի Նախարարութիւնը՝ «Ուլիլիամ Սարոյեան» մետալով:

Գրիգոր Սաթամեանի թատերական վաստակի ոսկեայ յորեկեանին առթիւ Հայրապետական օրհնութեան կոնդակ մը դրկած էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. գոր կարդաց Հոգ. Տ. Պարեո Մ. Վրդ. եւ ունկնդրուեցաւ յոտնկայս ու երկարատեւ ծափահարութեամբ:

Հանդիսութեան աւարտին ելոյթ ունենալով օրուան յորեկեարը անդրադարձաւ թատրոնի բարենպաստ դերին մասին եւ ըսաւ թէ թատրոնը բազմաթիւ արուեստներու կատարեալ եւ ամբողջական միաձուլումն է: Իսկ թատերական յաջող բեմադրութիւն մը կ'ընդգրկէ թատերական բազմաթիւ արուեստագէտներու ներդրումը: Այնուհետեւ Գրիգոր Սաթամեան յարեց «Ինձի համար եղած այս պատիւը, կ'ուզեմ բաժնել այն անձերու եւ արուեստագէտներուն հետ, որոնք գործակցեցան ինձի անվերապահ նուիրումով ու անխախտ հաւատքով: Իր խօսքն աւարտեց շնորհակալութիւն յայտնելով Հ.Բ.Լ.Մ.ի հեռատես դեկավարութեան եւ անվերապահ թիկունքին որ ցոյց կուտայ հայ ժողովուրդի եւ հայ թատրոնին նկատմամբ: Նաեւ շնորհակալութիւն յայտնեց յորեկեան հանդիսութեան կազմակերպիչներուն:

Այնուհետեւ տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն, որուն ընթացքին հանդիսականներն անձամբ շնորհաւորեցին յորեկեար Գրիգոր Սաթամեանը, մաղթելով յարատեւութիւն, քաջաւորջ երկար եւ երջանիկ տարիներ, ինչպէս նաեւ բազմաբեղուն գործունէութիւն:

### ԻԼՏԱ ՇԱՔԱՐԵԱՆԻ ԲԱՅԱՌԻԿ ՑՈՒՑԱՐԱՆԴԵՍ

Շարունակում է 8-էն

Բացման խօսքով հանդէս եկաւ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի ատենադպրուհի եւ հասցեան Վարժարանի Սանուց Յանձնախումբի ատենապետուհի՝ Տիկին Ալին Տօնիկեան որ ողջունելէ ետք բոլորը, հրաւիրեց Մշակութային Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանը որ իր սրտի խօսքին մէջ իր ուրախութիւնը յայտնեց մեր հանրութեան ծանօթացնելու Իլտա Շաքարեանի գործերը: Ան հակիրճ տեղեկութիւն տուաւ Միութեան հիմնադրութեան, յանձնախումբերու կազմութեան, գեղարուեստական, մշակութային, ընկերային եւ թատերական գործունէութեան մասին: Շնորհակալութիւն յայտնեց Արարատ Տան հիւրընկալութեան թանգարանի պատասխանատու՝ Տիկ. Մէլի Մանկասարեան Կօշիկին որ միշտ չզլանար իր բարոյական ու նիւթական աջակցութիւնը, մշակութային յանձնախումբին հետ միասնաբար գործակցելով թանգարանին դռները բանալով իրագործելու մշակութային ձեռնարկներ եւ մանաւանդ այդ օրուայ հիւրասիրութիւնը ստանձնած ըլլալուն համար իր սիրելի գարմուհիին Նորա Նալպանտեանի հետ: Շնորհակալութիւն յայտնեց նաեւ 1991էն յետոյ նշանակուած միութեան ատենապետներուն ջանքերուն համար, իր վարչական ընկերներուն, եւ բոլոր անոնց որոնք օգտակար հանդիսացան այդ օրուայ ձեռնարկի յաջողութեան համար: Նաեւ Տիկ. Շաքարեանին, որ իր գեղեցիկ գործերը ծանօթացնելու առիթը ընծայեց: Կարճ տեղեկութիւնով Միութեան ասպագայ ծրագիրներուն մասին փակեց իր խօսքը հրաւիրելով The Armenian Observer շաբաթաթերթի տէր եւ տնօրէն Փրոֆ. Օշին Քէշիշեանը, որ իր գարմանքը յայտնեց Տիկ. Իլտա Շաքարեանի արուեստագիտուհի շնորհքին ու տաղանդին համար հակառակ իրենց հետ նախապէս ծանօթութիւն ունեցած ըլլալուն: Փրոֆ. Քէշիշեան շեշտեց թէ նկարչութիւնը շարողութիւն մըն է: Նկարիչը ինչպէս որ կը զգայ այնպէս կը գեղանկարէ: Առաջին վարպետութիւնը պատասխան վրայ տեղադրման ձեւն է, պատկերները, թեմաները եւ այլն: Իսկապէս որ արուեստի գործ մըն է կատարածը եւ գնահատանքի արժանի:

Բեմ հրաւիրուեցաւ Միութեան Գործադիր Մարմնի Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Արթուր Խոսան-Խաչերեան որ հոգաբարձական եւ գործադիր Մարմնի Վարչութեանց կողմէ բարի գալուստ մաղթեց եւ իր ու վարչականներուն համար հաճոյքի զգացման փոխանցումը յայտնեց այսքան բազմութեան ներկայութեան համար: Այդ օրը որակելով «բացառիկ օր մը» որ առաջին անգամ է որ այս գեղեցիկ շէնքին մէջ շատ հրաշալի արուեստ

մը կը ներկայացուի եւ այդ արուեստը ներկայացնողն ալ Պոլսահայ արուեստագիտուհի Իլտա Շաքարեանն է, որ առաջին անգամ ի յայտ կու գայ իր գեղեցիկ արուեստի պատասխաններով իրեն համար շնորհակալութիւն կը յայտնենք ըսաւ Տոքթ. Արթուր ընտրած է այս Միութիւնը որ նաեւ իր «տունն է»: Նաեւ շնորհակալութիւն յայտնեց Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանին եւ տիար Էտուար Շաքարեանին որոնք բաւական յոգնեցան յաջողցնելու համար այդ ցուցահանդէսը:

Դարձեալ բեմ բարձրացաւ Տիկ. Ալին Տօնիկեան որ այդ գիշերը որակեց իբրեւ «պատուաբեր», որովհետեւ Պոլսահայ Միութեան Յանձնախումբի 20 ամեակին առթիւ կայանալիք ձեռնարկներուն առաջինը իրականացուցինք, Իլտա Շաքարեանի իւրականներու ցուցադրութեամբ իր իւրաքանչեւ արուեստի ոճով պարծանք բերելով ոչ միայն Պոլսահայ Միութեան, այլ՝ համայն հայութեան: Իսպանիայի Յանձնախումբի անունով ուրախ եւ զգացուած ենք որովհետեւ ինչպէս որ գիտէք Իլտան հասցեանցի ալ է: Ապա կարդաց անոր հակիրճ կենսագրականը որմէ ետք հրաւիրեց զայն որ իր սրտի խօսքը փոխանցէ:

Արուեստագիտուհի իր շնորհակալութիւնը յայտնեց տօքթ. Արթուր Խոսան-Խաչերեանին, Մշակութային Յանձնախումբի բոլոր անդամներուն նաեւ Տիկին Տօնիկեանին, The Armenian Observer շաբաթաթերթի տէր եւ տնօրէն Փրոֆ. Օշին Քէշիշեանին որ միշտ կը քաջալերէ հայ արուեստագէտը իր շաբաթաթերթի էջերուն մէջ բաժին յատկացնելով անոնց: Տիկ. Շաքարեան շնորհակալիք յայտնեց իր ընտանիքի անդամներուն որոնք միշտ նեցուկ կանգնած են իրեն գեղանկարչութեան ուսանողութեան տարիներուն, յատկապէս իր ամուսնոյն որ միշտ խրախուսած եւ գնահատած ու առիթ ընծայած է յաջողցնելու գինք իր արուեստին մէջ:

Նշենք թէ ցուցահանդէսը բաց մնաց յաջորդող երկու օրերուն: Իսկ վիճակահանութեան դրուած գեղեցիկ պատասխանով բարատարութեան Տէր եւ Տիկ. Իսպիլ եւ Ռիթա Պալճեան ամօրը:

Տիկին Շաքարեան տաղանդաւոր արուեստագիտուհի մըն է ինչպէս նաեւ կեանքը, արուեստն ու մշակույթը սիրող: Ան իր բնական արուեստի զգացումով այդ ուժը կը կապէ եւ կը կցէ մեզի եւ լոյսի եւ գոյնի նկատողութիւնը կը փայլի իր գործին ընդմէջէն: Իր առաքելութիւնը գեղեցիկութիւն բերել է իր կեանքին ու գործին: Անոր արուեստի գործերը մաքուր, յստակ եւ բարձր մակարդակի են, գիծերը զօրաւոր, գոյները ուժեղ, մերթ շարժուն, մերթ վերացական, մերթ ալ հանդարտ:

Ցուցահանդէսը իսկապէս որ յաջողութիւն մըն էր:



ները՝ արժանի են հայ մշակույթի առաքելներ կոչուելու: Անոնցմէ մին է Գրիգոր Սաթամեանը»: Ապա եզրակացուց. «Դուն՝ ժպիտ տուիր մարդոց սիրտերուն: Մնայ միշտ ժպիտներու սերմնացանը»:

Յորեկեարին ուղղուած սրտի խօսքերով հանդէս եկան Արփի Սիմոնեան, Արա Պապայեան, Վաչէ Պարսուսեան եւ Սամուէլ Իլանձեան: Ներկաները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին տեսաներից մը, ուր կարճ ակնարկներ կային Գրիգոր Սաթամեանի թատերական, ֆիլմի եւ հեռատեսիլի ելոյթներէն:

Գեղարուեստական բարձրորակ յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին շնորհալի երգիչներ Ալինուշ Եղնազար, Կարինէ Աւագեան, Ռաֆֆի Քերպապեան եւ Արա Գուրուչեան, որոնք դաշնամուրի ընկերակցութեամբ Վիթթորիա Սիմոնեանի՝ երգեցին երկու դերերգեր Վերտիի «Ռիկօլիթթօ» եւ Տ. Չուխաճեանի «Լէպլեպիճի» օփերաններէն:

Ողջոյնի խօսքերով եւ հուշակագիրներու տուելութեամբ հանդէս եկան Գալիֆօրնիոյ խորհրդա-

**SEROP'S CAFE**  
GREEK & LEBANESE FOOD  
SERVING BATON ROUGE SINCE 1979

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**  
Փաստինայի լաւ շրջանի մէջ,  
Washington փողոցի մօտերը 1 սենեակով վարձու տուն  
Վարձքը \$900 տոլար  
Մանրամասնութեան համար  
հեռաձայնել (310) 466-7775

### ՃՆՈՐՇԱԽՈՐԱՆՔ ԵՒ ՃՆՈՐՇԱԿԱԼԻՔ

Փէնսիլվանիոյ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցւոյ դպրաց դասի մենակատարուհի Տիկին Մանիա Արապաթլեանի, 50րդ տարեդարձի (surprise party) տեղի ունեցաւ Հոկտեմբեր 1ին եկեղեցւոյ «Memorial Hall» սրահին մէջ, հարազատներու եւ բարեկամներու մտերիմ շրջանակի մը մէջ:

Այս պատեհ առիթով Կիլիկեան Կրթական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը ջերմապէս կը շնորհակտորէ Տիկ. Մանիան, մաղթելով անոր քաջառողջ եւ երկար կեանք ու անսպառ կորով շարունակելու իր եկեղեցանուէր ծառայութիւնները:

Տիկին Մանիայի եւ ամուսնոյն խնդրանքով կատարուած նուիրատուութիւնները յատկացուած են Կիլիկեան Ճեմարանի կրթաթոշակներու ֆոնտին:

Մեր խորին շնորհակալութիւններն ու գնահատանքը կը յայտնենք բոլոր նուիրատուներուն:

- Տէր եւ Տիկ. Լուիսի եւ Մանիա Արապաթլեան \$500
- Տէր եւ Տիկ. Յովհաննէս եւ Ծովիկ Մկրեան \$200
- Տիկին Ռոզալին Մկրեան \$100
- Տէր եւ Տիկ. Բաբգէն եւ Անահիտ Մկրեան \$100
- Տօքթ. եւ Տիկ. Յարութ եւ Մայտա Եաղարեան \$100
- Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Շաքէ Տէրտէրեան \$100
- Տէր եւ Տիկ. Կէրի եւ Զանի Գալաճեան \$100
- Տիկին Սիլվա Քայալեան \$100
- Soprano's Catering \$100
- Տէր եւ Տիկ. Nourpar ;u Ani Mkr;an \$50
- Տէր եւ Տիկ. Յովհաննէս եւ Րոնիա Արապաթլեան \$50
- Տէր եւ Տիկ. Անդրանիկ եւ Մարի Տէրտէրեան \$50
- Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Միշէլ Տէրտէրեան \$50
- Տիկին Նէնսի Տէրտէրեան \$50
- Տիկին Ռոզ Ժանէթ Սողոմոնեան \$30
- Տիկին Ռոզի Գալուստեան \$25

Կիլիկեան Կրթական Միութեան Կեդրոնական Վարչութիւն

### ԱՊԱՔԻՄԱՆ ՍԱՂՈՒՆՔ

ՅԱԿՈՒ ԽՊՈՅԵԱՆ վերջերս վերաբուժական լուրջ գործողութեան մը ենթարկուած ըլլալով այժմ կը բոլորէ ապաքինման շրջանը: Շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք իրեն: **Հ.Մ.Մ.-ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՆԱՆԵՐՈՒՆ Ի ՆՊԱՍՏ 12-ՐԴ ԹԵԼԵԹՈՆԸ

Շաբաթուազուած էջ 7-էն

կական բազմաթիւ դժուարութիւններու առջեւ: Յովհաննէս Բալայեան եւ ընկերները, այդ բոլորը տեսնելով, անմիջապէս գործի անցան: Անոնք, սկիզբը, Հայաստանի մանուկներուն Նոր Տարուան առիթով նուէրներ կը ղրկէին: Այս տարուան հետ միասին, անցեալ 12 տարիներուն նուէր ստացող երեխաներու թիւը աւելցնելով 160 հազարի: Ապա սկսան՝ ծնողազուրկ եւ հաշմանդամ փոքրիկներու պատասպարաններուն եւ դպրոցներուն վերանորոգութեան աշխատանքներուն: Անոնք նոր խաղափայլեր, նոր սենեակներ, նոր սարքեր ապահովելով օգտակար կը հանդիսանան մեր բախտազուրկ, դժբախտ փոքրիկներուն:

12 տարիներէ ի վեր այս հիմնադրամը թեթեւօրէն կը կազմակերպէ եւ նախորդ տարիներու նման, այս տարի եւս մեծ թիւով, շուրջ 2,000 նուիրատուներ մասնակցեցան Ամերիկայի տարբեր նահանգներէն եւ օրըստօրէ մեծ արագութեամբ կ'աւելնայ գումարը, ի հեճուկս Ամերիկայի Միացեալ Նահանգներու տնտեսական սուր տագնապին: Արդարեւ, փառք ու պատիւ մեր պատուական ժողովուրդին, որ շուրջ 100,000 տոլարի խոստումներով եւ նուիրատուութիւններով այս տարի եւս սատարեց թեթեւօրէն:

Անշուշտ դրամահաւաքը տա-

կաւին բաց է եւ կը շարունակուի: Բոլոր անոնք, որոնք կ'ուզեն հայրենի մեր թանկագին ծնողազուրկ եւ հաշմանդամ երեխաներուն օգտակար ըլլալ, կրնան իրենց տուրքէ գերծ (tax free) նուէրները ղրկել հետեւեալ հասցէին՝

Armenian American Orphans Christmas Fund, Inc.  
P.O.Box 250038  
Glendale, CA 91225  
Non-profit Organization  
A Tax-Exempt 501 (c)3 Charity  
Direct Deposit: Wells Fargo Bank Acc. #1736835495  
Tel. (818) 246-0125, (818) 239-6880  
www.forourkids99.com

Չմոռնանք, որ նման ազնիւ եւ պատուաբեր արարքներով, միասնաբար կրնանք թեթեւցնել հոգեպէս ճնշուած մեր փոքրիկներու բեռը, անոնց կեանք եւ յոյս ներշնչելով:

Այդ օր մտաւորական, հասարակական գործիչներ, կղերականներ եւ գործատէրեր իրենց սրտագին կոչերով մեծապէս նպաստեցին այս գործի փայլուն յաջողութեան:

Ձերմօրէն կը շնորհակտորենք բոլոր անոնց, որոնք ուղղակի կամ անուղղակի կամաւոր աշխատանքով նպաստեցին հայրենաշէն ու պատուաբեր այս գործին, իսկ Յովհաննէս (Քաջ Նազար) Բալայեանին մեծ «պրաւօ»-ով մը առողջութիւն մաղթելով, կ'ըսենք:— Ձեր բոլորին վարձքը հազար կատար:

### ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԱԼԻՔՆԵՐԻ ՄԷՋ

Շաբաթուազուած էջ 14-էն

յաստանից է: Եւ պէտք է զարմանալ, որ Դաւիթեան ամուսինները թուան Սուրբաբայ: Կապուեցին նահանգատի իշխանութիւններին հետ, ներկայացրին խնդրանքը: Մայրահեղ բիւրոկրատիա:

Աստիճանակարգի իւրաքանչիւր հարթակում սիրալիք եւ հաճոյքով օգնում էին, բայց միաժամանակ՝ պարտադիր կարգով գեկուցում վերադաս ղեկավարին:

Բոլորը հասկանում էին, ամէն ինչ ըմբռնում, բոլորը համաձայն էին եւ բոլորը գեկուցում էին իրենց ղեկավարութեանը:

Չգիտեմ, թէ որ մակարդակում ստացանք «դրբօ»-ն, բայց դա իսկական բարիք էր՝ «ոչ միայն թոյլատրել, այլեւ օգնել»:

Հայկական եկեղեցին պահպանուել է:

Պահպանուել են բոլոր հայերէն գրութիւնները սեւ մարմարէ աւիւրներով վրայ: Երկու հարիւրյիսունմիլիոնանոց մահմեդական երկրում, հայկական խաչով քրիստոնէական եկեղեցում ծառայութիւն են վարում չինացի կաթոլիկները: Չինացի պատու Ալէք Լիմը խոստովանեց, որ վաղուց էր սպասում, ինչպէս ինքն ասաց, թէ կուզ մէկ այն ակնթարթին, երբ իրենց մօտ կը գան եկեղեցու նախկին տէրերի ծառանգները, որպէսզի թարգմանեն գրութիւնների բովանդակութիւնը: Պատուը ոչ միայն մեզ յանձնեց հայկական շինութիւնների պահպանուած արխիւային փաստաթղթերը, այլեւ «Արմենիա» առաջատանաւի վրայ օրհնեց մեր յետագայ ուղին:

\* \* \*

«Արմենիան» խարիսխ բարձրացրեց Սուրբաբայից, եւ հենց մտանք բաց ձաւայեան ծով, կարմիր-կապույտ-ծիրանագոյն մեծ առագաստը փոխարինեցինք գորշաւուն ստակներով: Չափից աւելի ուժգին էր քամին: Վայրկեանում քամն մեթրը դեռեւս մորրիկ է, բայց պոթկումներն արդէն փոթորկային էին: Բայց այ թէ ինչն էր զարմանալի եւ, մեղմ ասած՝ տհաճ: Քամին փչում էր ասես հսկայական շոգեբաղնիքից: Ոչ թէ տաք, այլ՝ հրաշուհ: Իւրաքանչիւր

մղոն մեզ մօտեցնում էր հասարակածին: Արեւն աւելի ու աւելի էր «գնդիթանում»: Աւելի ու աւելի էին կարճանում ստուերները տախտակամածի վրայ: Երկրորդ օրը քամին հանդարտուեց: Լուսթիւն եւ սօթ: Քրտինք՝ առուակներով: Երազանք քամու մասին: Թէկուզ եւ հանդիպակաց: Յաջողեցնում էինք անընդհատ փոխել հալը, որպէսզի քամի որսայինք ու գիզգազներով, բայց գոնէ առաջ շարժուէինք: Երկու, երբեմն էլ երեք անգամ երկարում էր ուղին, բայց գնում էինք դէպի նպատակակէտ, դէպի Սինկաբուր: Դէպի Գրիգոր Լուսաւորիչ ճերմակ եկեղեցի: Սակայն Սինկաբուրից յիսուն-վաթսուն մղոն առաջ մենք դեռ պէտք է նշէինք Նեպտունի տունը:

...Մէկուկէս տարի առաջ «Արմենիան» արդէն հատել էր հասարակածը Պրագիլիայի ափերի մօտ, աւելի ճիշտ՝ լեգենդար Ամազոնի գետաբերանի մօտակայքում:

Ի դէպ, այն ժամանակ որոշեցինք պիտոնութիւն անել. մտանք հռչակաւոր գետի պղտոր ջրերը եւ մի քանի մղոն լողացինք հոսանքին հակառակ, իհարկէ շարժիչով: Եւ ասա «Արմենիան» հատեց հասարակածը: Մենք յայտնուեցինք Հարաւային կիսագնդում: Անձնակազմի բոլոր անդամներն օժոււմ ստացան:

Հիմա «Արմենիան» վերադառնում է հարազատ Հիւսիսային կիսագնդը:

Հայերն, իհարկէ, Նեպտունի տուն չունեն: Բայց ես ուսումնասիրել եմ այն ամէնը, ինչ կապուած է հասարակածի հատման արարողութեան հետ: Ընդհանրապէս «Նեպտունի տուն» պատմութիւնը ոչ մի կապ չունի հասարակածը հատելու փաստի ամրագրման հետ: Հնում այն նշում էին Հոմոմը՝ ի պատիւ աղբիւրների եւ գետերի աստծոյ (յետագայում աւելացրին նաեւ ծովերը) եւ տօնն անուանում էին Նեպտունալիա: Քանի որ այդ տօնի արարողակարգը յիշեցնում է թատերական գործողութիւն, որոշեցինք Նեպտունի դերը տալ Հայկ Բաղալեանին: Չէ՞ որ յայտնի դրասան Ֆրունզիկ Մկրտչեանի գարմիկն է: Մտաբերեցինք «Միմիոն»:

Շաբաթուազուած էջ 14-էն

**ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆՏԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave  
 Pasadena, CA 91104  
 Գրասենտակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով  
 Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
 (626) 398-0506

**ՎԱՐՉՈՒ ՄՐԱԸ**  
 ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԻ ՐԱՍԱՐ)  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՐԱՍԱՐ**  
 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
 ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈՒԱՅՆՆԵԼ  
 (626) 797-7680



Ճաշկերոյթ  
Պարահանդէս  
Նուիրում

Հ.Մ.Մ.ի 90 Ամեակին  
կազմակերպութեամբ

Հ.Մ.Մ.ի Շրջանային Վարչութեան

Օրուան հանդիսութիւնը պիտի խանդավառէ  
յատուկ Լիբանանէն ժամանած, սիրում երգիչ՝

Պերճ Նազգաշեան

Տեղի կ'ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 26, 2011  
երեկոյեան ժամը 8:30 էն սկսեալ

Deluxe Banquet Hall

Շքեղ սրահէն ներս՝

237 East Olive Avenue, Burbank, CA 91502

Մանրամասնութեան համար հեռաձայնել  
(626) 485-6434 (818) 324-057

Մուտքի Նուէր \$ 75.00